Եթէ խաւնակ օրերից յետոյ լեռների գլխին մանր-մանր ամպեր լինեն ցրուած՝ դա նշան է, որ մի քանի օր գոնէ լաւ եղանակ կլինի։

—

Եթէ արեւը մայր մտնելուն պէս արեւմտեան հողմի ամպերը քշելիս լինի դէպի արեւելք՝ հետեւեալ օրը պարզ եղանակ է խոստանում։

—

Եթէ ամառուայ գիշերներին պարզ երկնակամարի մի որեւիցէ կողմը փայլատակէ, դա նշան է, որ հետեւեալ օրը այն կողմը կ՚անձրեւէ։

—

Կովկասում աշնանը եւ ձմեռը հարաւային եւ արեւելեան հողմերը համարեա թէ միշտ անձրեւաբեր են լինում կամ շարունակ թխպոտ օրեր են բերում։

—

Երբ արեւի մտնելու հետ կարմիր ամպերն անհետանում են, հետեւեալ օրը վճիտ եղանակ է լինելու։ Կարմիր գոյնով լուսինը՝ հողմ եւ վատ եղանակ է գուշակում։

—

Ասում են, նոր լուսնի երրորդ եւ չորրորդ օրը ինչպէս որ լինի եղանակը՝ այնպէս էլ ամբողջ լուսնական ամիսը կ՚անցնի։

—

Մանր եւ բարակ ձիւնը՝ շարունակուող սառնամանիք։

—

Հանդարտ եւ պարզ եղանակը՝ ձմեռը—սառնամանիք։

—

Կատուն եթէ յատակը (գետինը) չանգռում է—վատ եղանակ։

—

Կատուն եթէ գլուխը ծածկում է եւ պառկած է—սառնամանիք։

—

Կատուն եթէ պատը չանգռում է —առհասարակ անկանոն եղանակ։

—Արեւի շուրջը բակ—վատ եղանակ։

—Սիւներ արեւի մօտերքը—սառնամանիք։

— Ամբողջ երկնակամարը ամպած պարզուող արեւմուտքում՝ մի քանի օր լաւ եղանակ է գուշակում։

—Արեւելեան չոր քամին—լաւ եղանակ։

—Հիւսիսային քամին—ցուրտ։

—Արեւմտեանը—անձրեւ է բերում։

-Հարաւինը՝—ամառը լաւ եղանակ ձմեռը տաք եւ խոնաւ։

—Երբ աստղերը ձմեռը սաստիկ փայլում են—սառնամանիք։

—

ԱՄԵՆԱՀԱՍԱՐԱԿ և ԱՐԺԱՆ ՕԴԱՉԱՓ.

—Վերցրու $\frac{1}{2}$ լոտ քափուր (camphor), $\frac{1}{8}$ լոտ բորակ (селитра) և $\frac{1}{8}$ լոտ նշադուր։ Ամէն մէկը սրանից [illegible] մէջ հալուած բաժին առած առանձին-առանձին հալեցրու (քափուրը տաքացրած սպիրտում շուտ է հալվում). յետոյ այս հեղանիւթերն ածա խողովակաձեւ շշի մէջ, խցանով պինդ խցիր եւ բերանը կնքիր եւ հեղանիւթով լի շիշը բաց օդում հիւսիսային կողմը պատուհանի մօտ պատին պնդացրած կախ արա, որը այդպէս կարելի է եւ ամբողջ տարին թողնել։ Այս գուշակութիւնները հետեւեալն է՝ երբ միջի հեղանիւթը պարզ է—դա գուշակում է պարզ եղանակ։ Երբ պղտոր—անձրեւ եւ ձիւն։ Երբ յատակին սառոյցի նման բան երեւայ—խեղդող օդ կամ սառնամանիք։ Ձմեռը սառոյցը որքան ծանրանայ այնքան ցուրտը կ՚սաստկանայ։ Պղպջակներով (փոքր աստղերի նման) հեղանիւթը—փոթորիկ։ Հեղանիւթի վերի մասում թելի նման բան—քամոտ եղանակ։



# III. ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

## ԱՐԵՒԻ ԵՒ ԼՈՒՍՆՈՅ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ.

1894 թուականին թէեւ երկրագնդի վրայ լուսնոյ եւ արեւի խաւարումներ տեղի կունենան (արեւինը՝ 25-ին մարտի եւ 17-ին սեպտեմբերի. լուսնոյ՝ մարտի եւ 3-ին սեպտեմբերի), բայց դրանցից ոչ մինը Տփխիսում չի նկատուի։ Իսկ հոկտեմբերի 29-ին Արուսեակը արեւի սկաւառակից կ՚անցնի, որը նոյնպէս Տփխիսում նկատելի չի լինի։

—

## ՄԵՐ ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ։

Տիեզերքում մեր արեւի նման արեգակներ 2000-ից աւելի են հաշվում, եւ ամէն մինն ունի իր խումբը, որոնց ամէն մէկի շուրջը պտտում են տասնեակ աստղեր՝ մոլորակներ՝ իրանց արբանեակներով եւ այլ երկնային մարմիններ։

Արեւը երկրագնդից մեծ է 1,407,000 անգամ եւ երկրից 143,000,000 միլ. վերստ հեռաւորութեան վերայ է գտնւում։ Արեւից լոյսը մեզ հասնում է 8 րոպէում։ Մինչեւ այժմ գտնուած արեւի շուրջը պտտող ամենանշանաւոր մոլորակներն են՝

Արուսեակը, որն արեւից հեռու է 65 վերստ եւ պտտում է արեւի շուրջը 88 օրում.

Փայլածուն հեռու է 103 միլ. վերստ,
եւ պտտում է 225 օրում։

Երկիրս հեռու է 143 միլ. վ.,
պտտում է $365\frac{1}{2}$ միլ. օր։

Հրատը հեռու է 215 միլ. վ.,
պտտում է 687 օրում։

Լուսնթագը հեռու է 700 միլ. վ.,
պտտում է 12 տարում։

Երեւակը հեռու է 1300 միլ. վ.,
պտտում է 29 տ.։

Ուրանոսը հեռու է — միլ. վ.,
պտտում է 85 տ.։

Նեպտունը հեռու է 5208 միլ. վ.,
պտտում է 164 տարում։

—

## ԻՆՉ ԲԱՆ Է ԼՈՒՍԻՆԸ

Լուսինը երկրիս նման մի գունդ է, բայց երկրից 50 անգամ փոքր է, իսկ թանձրութեամբ ու կշռի կողմից լաւ

նը 80 անգամ թեթև է երկրից. նրա հեռաւորութիւնը 350533 վերստ է երկրից, և եթէ հնար լինէր երկրից մինչև լուսին երկաթուղի շինել և ժամը 38 վերստ գնալ, այն ժամանակ 400 օրից հազիւ հասնէինք լուսնին։

Լուսինը երկնային տարածութեան մէջ շարժւում է մի բոլորակ մօտ մի վերստ արագութեամբ պտտելով երկրագնդի հետ արևի շուրջը։

Երբ հասարակ աչքով տեսնում ենք, լուսինը մարդկային դէմքի նմանութիւն ունի տեղ-տեղ լուսաւոր՝ որպէս աչք, քիթ բերան, սակայն երբ հեռադիտակով նայում ենք, յայտնվում է որ դոքա ոչ այլ ինչ են, այլ սարեր հովիտներ, ձորեր և անդունդներ, և այնպիսի լեռներ որոնք 3—5—7 վերստից աւելի բարձրութիւններ ունեն և եղել են հրաբխային։ Վերջերս այդ լեռների վերայ ձիւնի կոյտեր են երևացել, որից եզրակացնում են որ լուսնի վերայ ջուր լինելով կ՚լինի և մթնոլորտ։

Լուսինը նախ պտտում իր առանցքի վերայ, երկրորդ՝ երկրի չորս կողմը (28 օր. 69 ժ. և 45 վայրկեան) ուրեմն և երկրի հետ էլ արևի շուրջը. այդ պատճառով էլ մենք միշտ լուսնի մի երեսն ենք տեսնում և երբէք միւս երեսը չենք տեսնի։ Լուսնի վերայ էլ լինում է գիշեր ինչպէս և ցերեկ. բայց այնտեղ գիշերը ինչպէս և ցերեկը 14 օր, 18 ժամ է տևում։ Ցերեկները այնքան տաքութիւն է հաւաքւում լուսնի վերայ, որ եթէ ջուր լինէր՝ կ՚եռար. իսկ գիշերները էլ այնքան ցուրտ է. որ մարդ կ՚սառչի։ Վերջերս Պերուայի դիտանոցի ամերիկացի աստղագէտ Ուլեամ Պեկերինգը և Համբուրգի դիտանոցի տեսուչ Հոլդենը հետազօտութիւններով և նրանց հազար անգամ մեծացրած—հանած լուսանկարներով նկատել են, բացի ձիւնի կոյտերից և մի շարք ալեքանման և ճիւղաձևեր, որոնք զարմանալի նմանութիւն ունեն գետերի։ Այդ եզրակացութեան են եկել և ուրիշները։ Եթէ այս բոլորը, հաստատուի այն ժամանակ ահագին յեղափոխութիւն կ՚լինի լուսնի մասին մինչև այժմ կազմուած գաղափարների մէջ։ Թէև լուսնի մասին միշտ եղել են զանազան կարծիքներ յայտնողներ, թէ այդ երկնային մարմինը բոլորովին չէ մեռել, այնտեղ դեռ կենդանութիւն կայ, մինչև իսկ բնակիչներ կան, որոնց հետ առաջարկում էին հաղորդակցութիւն *) սկսել։

— — —

*) Երկու տարի սրանից առաջ մի փրանսուհի մեռնելով թողեց մի միլիոնից աւելի կարողութիւն և կտակեց հասցնելու այն մարդուն՝ որ կ՚սկսի, կ՚գտնի՝ հաղորդակցութեան միջոց մի որևիցէ երկնային մարմնի հետ։ Ծ. Աշխ.



# IV՝ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՄՏՔԵՐ

Որքան էլ փոքր լինի հայրենիքը, ազնիւ և սիրող սրտի մէջ մեծ տեղ է բռնում։

—

Վարմունքը մի հայելի է, որի մէջ ամեն մարդ իր պատկերն է ցոյց տալի, «Գէօթէ»։

—

Անցեալը հիմքն է ապագայի և ղեկը ներկայի։

—

Ո՛չ մի բան չ՚կայ առանց անցեալի, որպէս ո՛չ մի կառուցում առանց հիմքի։

—

Սառնասիրտ մարդը գործի արիւն ունի, իսկ քարասիրտը հարսափ։

—

Մարդը բնութեան այն պտուղն է, որ ստեղծագործութիւնից մինչև այսօր դեռ չի հասել։

—

Մենք տրամադիր ենք ուրիշի պատկերը գործի մէջ տեսնելու, իսկ մերը հայելու մէջ.

—

Հաւասարութիւնը թուաբանութեան մէջ, իսկ մարդկանց մէջ մեռնելուց յետոյ։

—

Իբրև ամուսին պէտք է այն կինը ընտրել միայն, որը եթէ տղամարդ լինէր, պիտի ընտրէինք իբրև բարեկամ։

—

Անայնամոլութիւնը մեր փոքրիկ մեղքերից ամենից դժուար ծածկուողն է։

—

Ոչինչ, այնքան մեր կրած տառապանքներից մեզ չէ մխիթարում, որքան մեր արած բարիքը։

—

Անձից պատահած դժբախտութեան պատճառը երբ փնտռես, կ՚տեսնես միշտ որ մի քիչ քո յանցանքից է։

—

Սիրահարների և բանաստեղծների համար ժամանակը շատ շուտ է անցնում։

—

Երբ սէրը մեր սրտի մէջ է սլրտում, երկիւղն այնտեղից շուտով է անցնում։

—

Երիտասարդի առաքինութիւնը երկար չի կարողանում դէմ դնել գեղեցիկ կնոջ հրապուրանքին։

—

Սիրոյ հաճոյքը մի վայրկեան է միայն տևում, իսկ սիրոյ վիշտը մինչև կենաց վերջը։

—

Ժամանակն ամենքի վերայ միևնոյն արդիւնքը չի առաջ բերում։

—

Ոչ մի ուրիշ մեծ ցաւ չ՚կայ, քան խղճութեան մէջ երջանկութեան յիշելը.

—

Դժբաղդութիւնն արագաթռիչ ծիծեռնակ է, բաղդաւորութիւնը կաղ կրիայ.

—

Աղքատութիւնը յանցանք չէ, յանցանքներով հարստանալն է յանցանք։

—

Ազնիւ աղքատը հարուստ է նրանով, որ համարձակ կարող է պարծենալ ազնւութիւնը։

—

Պարտաճանաչ մարդու համար, պարտքը ազատութեան գերութիւն է։

—

Ազնուութիւնը փողով չի գնւի, ուստի և անազնուութիւնն էլ փողով չի ծախւի

—

Մեռնող մարդն ու թափող տերևները միևնոյն նշանակութիւնն ունին։

—

Այր մարդը բանականութեամբ է դատում, իսկ կինը սրտով։

—

Թռչունը փետուրով է ճանաչւում՝ մարդը գլխութեամբ։

—

Ծլատի փողը շատ է, բայց դարդն անչափ։

—

Առանց վառօղի և գնդակի լաւ հրացանն էլ ձեռնափայտ է դառնում։

—

Մաքրասիրութիւնը կեանք և առաքինութիւն է։

—

Մաքրասիրութիւնը երջանիկ ապրելու մի պայմանն է։

—

Մաքրասէրն առողջ է լինում և երկարակեաց։

—

Ազնուութիւնն ուրախութեան աղբիւրն է։

—

Բաղդն իղձալի և հաստատամտութեան տակ է գտնւում։

—

Ինքնազոհութիւնը հանգստութեան ամենահաստատ ճանապարհն է։

—

Կեանքն աշխարհիս վերայ ամենաչնչին բանն է, եթէ նրա վրայ չես նայում, որպէս մի ամենամեծ և անընդհատ պարտաւորութեան վերայ։

—

Երեք բան կայ դժուար—գաղտնիք պահել, նախատինքի դիմանալ և պարապ ժամանակը գործածել։

Ներելու առաջին աստիճանը կրած վիրաւորանքի մասին չխօսելն է։

—

Անմեղութիւնն ազատելու համար՝ զոհ գնալն առաքինութիւն է։

—

Կնոջ շնորքն է սիրելի և ոչ գեղեցկութիւնը։

—

Կարեկցութիւնը՝ սրտերը բաց անող մի ոսկի բանալի է։

—

Կրօնքը հսկում է գաղտնի յանցանքների վրայ, օրէնքը հրապարակական յայտնի յանցանքների համար։

—

Ամենաաղքատ տունն անգամ, որտեղ իշխում է մի առաքինի, աշխոյժ և ժիր կին, դառնում է հանգստութեան և երջանկութեան օթևան։

—

Մենք կրում ենք մեր մէջ ամենամեծ թշնամիները՝ մեր կրքերը։

—

Կանայք ընկերութիւնների մէջ աւելի քաղցր են, քան թէ իրանց տան մէջ։

—

Հաճոյքը մի ստորակէտ է, որ մեր վշտերը բաժանում է։

—

Դժբաղդութիւնը երբեմն իր պատճառից աւելի է սևում։

—

Կեանքը ծովի ջրի պէս՝ այն ժամանակ է քաղցրանում, երբ դէպի երկինքն է բարձրանում։

—

Շողոքորթն ու խաբեբան հաւասարապէս երկիւղալի են, իսկ ապերախտը ամենից զզուելի։

—

Միայն գիտուններն են շարունակում սովորել, իսկ տգէտները նախ սովորեցնելն են ընտրում։

—

Մաքրասիրութիւնն է լուսաւորութեան և քաղաքակրթութեան առաջին նշանը։

# V. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1) Համաշխարհային նշանաւոր անցքերի եւ պատմութեան։

Քրիստոսի ծննդից առաջ։

3254 Ջրհեղեղ։
2941 Չինացւոց տարերի գլուխը։
2640 Նինուէի հիմնելը։
2300 Եգիպտոսի թագաւորութեան հիմնելը։
2000 Մետաքսի գործածութիւնը։
1700 Եգիպտացւոց մեհենական գրերը։
1750 Բաբելոնի աշտարակաշինութ.
1651 Մովսէս մարգարէն ծնւում է։
1500 Աթենքի հիմնարկութիւնը։
1200 Դարբնական արուեստի սկիզբը։
1150 Տպագրութիւնը Չինաց մէջ։
1056 Դաւիթը թագաւորում է։
1017 Սողոմոնը թագաւորում է։
1010 Սողոմոնի տաճարի շինութիւնը։
982 Սողոմոնի մահը։
800 Արծաթ փողի գործածութիւնը։
802 Ասորեստանի թագաւորութեան անկումը։
754 Հռոմուլոսը հիմնում է Հռոմը։
721 Իսրայելացւոց թագաւորութեան անկումը։
585 Երուսաղէմի աւերումը և տաճարի այրումը Նաբուգոդոնոսորից։
560 Կիւրոսը հիմնում է Պարսից տէրութիւնը։
558 Կոնֆուցիոսը ծնւում է։
552 Բուդդայականութեան սկիզբը Հնդկաստանում։
523 Աստուածաշունչը թարգմանւում է յոյն լեզուով 70-ից ձեռքով։
469 Սոկրատէսը ծնւում է։
384 Արիստոտէլը ծնւում է։
356 Աղէքսանդր Մակեդոնացին ծնւում է։
325 Աղէքսանդր Մակեդոնացին Հայաստանի վերայով արշաւում է Հնդկաստան։
315 Չինական պարսպի շինութեան սկիզբը։
160 Չինացիք բամբակից թուղթ են շինում։
110 Հռոմայեցիք հնարում են սապոն եփելը։
76 Կիկերոնի ժամանակ Տիւռոնը հնարում է շուտ գրելու ձևը։
70 Վեզուվի հրաբուխի ժայթքումը Հերքուլանում և Պոմպէի քաղաքների աւերումը։

Քրիստոսից յետոյ։

Յս. Քրիստոսը ծնւում է։
34 Յս. Քրիստոսը խաչւում է։
» Հայերը ընդունում են քրիստոնէութիւնը։
41 Առաքեալները սկսում են գրել աւետարանը։
60 Հռովմայ մէջ Ներոն թագաւորի ժամանակ շինւում է ապակիի (ամանեղէնի) առաջին գործարանը։
70 Տիտոս կայսրը աւերում է Երուսաղէմը։

97 Յովհաննէս աւետարանիչը գրում է Եփեսոսում աւետարանը։
135 Հրէայք սկսում են ցրուել ամբողջ աշխարհում։
210 Հռոմում առաջին անգամ, լուսամուտների մէջ ապակի է դրվում։
300 Մեղրամոմից ճրագ են շինում։
303 Սուրբ Էջմիածնի հիմնելը։
306 Մեծն Կոստանդիանոս թագաւորում է։
321 Մարտի 7-ից Կիրակին տօնելը սկսվում է։
325 Առաջին տիեզերական Սբ. Ժողովը Նիկիայում Կոստանդիանոսի օրով։
328 Կ. Պոլսոյ հիմնարկութիւնը.
381 Կ. Պոլսոյ տիեզերական Սբ. Ժող.։
400 Եւրոպայի եկեղեցեաց մէջ զանգակի գործածութիւնը սկսվում է։
431 Եփեսոսում երրորդ տիեզերական Սբ. Ժողովը։
451 Քաղկեդոնի ժողովը։
476 Հռոմէացւոց կայսրութեան անկումը։
496 Ֆրանկները ընդունում են քրիստոնէութիւնը։
550 Շերամի որդն ու մետաքսը առաջին անգամ Եւրոպայ է բերվում։
570 Մահմեդը ծնվում է։
636 Եւրոպայում եղեգէ գրչի տեղ փետրէ գրիչ են սկսում գործածել։
637 Արաբացիք առնում են Երուսաղէմին։
650 Լատինացւոց եկեղեցեաց մէջ երգեհոն գործածելը սկսվում է։
711 Իսպանիան գրաւվում է Արաբներից։
807 Չինացւոց պէս Եւրոպայի մէջ էլ թղթի գործածութիւնը սկսվում է։
850 Արաբացիք շաքար շինելը հնարում են։
855 Սլաւոնական այբուբենը գտնվում է։
876 Յունաց և կաթոլիկաց եկեղեցիները բաժանվում են միմեանցից։
1022 Կուիտօ Եւրոպայի երաժիշտը նօտան հնարում է։
1072 Երուսաղէմին առնում են Սելջուկները։
1086 Խաչակրաց արշաւանքի սկիզբը։
1171 Եւրոպայի Վիէննայ քաղաքի մէջ բացվում է առաջին դրամատունը
1246 Առաջին բժշկական ուսումնարանը Ֆրանսիայում։
1291 Խաչակրաց վերջին արշաւանքը։
1299 Ֆլորենցիայում սկսում են ակնոցներ շինել։
1301 Կողմնացոյցի գիւտը։
1308 Շվէյցարական հասարակապետութեան հիմնուելը։
1330 Գուտենբերգը, Ֆաուստ և Շեֆերը Մագունտիոյ մէջ տպագրութիւնը հնարում են։
1338 Վառօդը գտնում են։
1380 Թնդանօթի գիւտը։
1384 Լենքթեմուրի արշաւանքները Ասիայում։
1415 Հուսին այրում են։
1440 Հռոմի Սբ. Պետրոս եկեղեցւոյ հիմնարկութիւնը։
1450 Եւրոպայի մէջ առաջին գիրքը տպվում է։
1453 Տաճիկները առնում են Կ. Պոլսին և վերջանում է Բիզանդական կայսրութիւնը։
1464 Նամակատուն և փօստայով թղթատարութիւնը հաստատվում է Ֆրանսիայում։
1473 Կոպերնիկոսը ծնվում է Տօրնում։
1483 Սկսվում է գործադրվել Ինկվիզիցեան։
1492 Կոլոմբոսը գտնում է Ամերիկան (Ուրբաթ օրը, Հոկտեմբերի 13-ին)։
1493 Կոլոմբոսը Ամերիկայից եգիպտացորեն է բերում Եւրոպայ։



1500 Ծոցի (անուանաւոր) ժամացոյցը հնարում են։
1524 Առաջին ձեռագիր լրագիրը Վիէննայում։
1546 Լիւտերը վախճանվում է։
1615 Առաջին տպագիր լրագիրը։
1616 Շէքսպիրը մեռնում է։
1642 Գալիլէն մեռնում է։
1689 Շոգեշարժ մեքենաների գիւտը։
1727 Նիւտոնի մահը։
1752 Ֆրանկլինը հնարում է շանթարգելը։
1779 Օդապարիկը հնարում են։
1785 Ժորժ Ստեֆենսոնը առաջին շոգեկառքը շինում է։
1789 Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը։
1790 Գալվանը հնարում է գալվանեան ելեքտրականութիւնը։
1800 Ջօնսոնը գտնում է մարմնի պատուաստումը։
1801 Վիմագրութեան գիւտը։
1803 Անգլիացիք մետաղէ գրիչը հնարում են։
1803 Շոգենաւի գիւտը։
1805 Շիլլերի մահը։
1810 Նապոլէոնի արշաւանքը դէպի Եւրոպայի-արևելք։
1812 Արագատիպ մամուլի հնարելը։
1821 Նապոլէոն I-ը մեռնում է։
1839 Տալբոթ անգլիացին հնարում է լուսանկարը։
1841 Առաջին հեռագիրը շինում են Վաշինգտոնից Բալտիմօր։
1848 Ելեքտրակ. հեռագիրը հնարում են։
1851 Առաջին ռեվօլվերը շինվում է։
1852 Նապոլէոն III-ը Կայսր է հրատարակվում։
1853 Արևելեան պատերազմը։
1861 Իտալական թագաւորութեան միացումն և Վիկտոր-Էմմանուէլի թագաւոր հրատարակուելը։
1862 Սուէզեան ջրանցքի բացումը։
1865 Գերմանական դաշնակցութիւնը և Աւստրօ-Պրուսական պատերազմը։
1867 Ամերիկայից Անգլիայ, Ատլանդ. ովկիանոսի վրայով հեռագիրը շինում են։
1868 Հնդկաստանի հեռագիրը Կովկասի վերայով շինվում է։
1870 Ֆրանս-պրուսական պատերազմը և Նապոլէոն III-ի գերութիւնը Սեդանում։
1870 Իտալիան վերջնականապէս գրաւում է Հռոմը։
1873 Վիէննայի համաշխարահանդէսը։
1875 Հերցեգովինայի ապստամբութիւնը։
1877 Ռուսաստանը պատերազմ է հրատարակում Տաճկաստանին։
1878 Սան-Ստեֆանոյի դաշնադրութիւնը
1878 Բեռլինի դաշնադրութիւնը։
1879 Ելեքտրական լապտերների վառելը հնարում են։
1880 Տելեֆօնի գիւտը։
1881 Ֆօնօգրաֆի գիւտը։
1889 Փարիզի համաշխարհահանդէսը։
1893 Չիկագոյի (Ամերիկայում) համաշխարհահանդէսը։

## 2) Ռուսաց և Վրաց

### նշանաւոր անցքերը

Քրիստոսից յետոյ։

40 Թուլին Անդրէաս Առաքեալը ու Սիմոն Քանանացին Վրաստանում մտցնում են Քրիստոնէութիւնը։
446 Վրացիք սկսում են գործածել մեր Ս. Մեսրոպի հնարած այբենարանը (խուցուրին)։
597 Վրացիք հայերից բաժանվում են։
623 Հերակլ վրաց թագաւորը առնում է Հայաստանի մի մասը, Ատրպատականը և Շիրվանի խանութիւնը։
862 Ռուսաց տէրութեան սկզբնաւորութիւնը։

988 Ռուսները Ս. Վլադիմիրի առաջնորդութեամբ ընդունում են յոյներից Քրիստոնէութիւնը։
1010 Բագրատ Թագաւորը Վրաստանում և Իմերեթում եկեղեցիներ է հիմնում (Մցխեթում)։
1011 Թարգմանվում է վրաց լեզուով առաջին աւետարանը։
1212 Վախճանվում է Թամարայ թագուհին։
1222 Նիժնի-Նովգորոդի հիմնելը։
1224 Չինգիս-խանի յարձակմունքները և ռուս իշխաններին նրան հպատակեցնելը։
1238 Մոնղոլական լծի սկիզբը։
1289 Օսերը Գօրի քաղաքն այրում են։
1328 Մոսկվայի Թագաւորութ. սկիզբը։
1428 Հրաձգային զէնքերի գործածութիւնը Ռուսաստանում։
1469 Վրաց Թագաւորութիւնը բաժանվում է երեք մասերի՝ Քարթլ, Իմերէթ և Կախէթ։
1480 Ռուսաստանը ազատվում է Մոնղոլական լծից։
1491 Առաջին տպուած գիրքը սլաւոնական լեզուով հրատարակվում է։
1518 Պարսից Իսմայիլ-Շահը առնում և աւերում է Թիֆլիսը և Մցխեթը։ Հաւլաբարի կամրջի մօտ էլ մզկիթ է շինում։
1524 Մակարևայի տօնավաճառի բացումն։
1535 Շահ-Թամազը առնում է Թիֆլիսը։
1547 Յովհաննէս Գրօզնին առնում է առաջին Թագաւորի տիտղոսը։
1556 Հաշտարխանի թագաւորութեան անկումը։
1563 Մոսկվայում սկսվում է տպագրութիւնը
1583 Ռուսները առնում են Սիբիրը։
1589 Ռուսաց պատրիարքութեան սկիզբը։
1611 Լեհացիք առնում են Մոսկվան, Շվեդացիք Նովգորոդը։
1612 Ռուսաստանն ազատվում է լեհերից։
1617 Շահ-Աբաս Ա.-ը աւերում է Վրաստանը և շատ վրացիներ տանում է իւր հետ Պարսկաստան։
1632 Առաջին կանոնաւոր զօրքը Ռուսաստանում։
1634 Վրաստանում մահմեդականութեան մուտք գործելը։
1664 Արչիլը Թելաւը շինում է աթոռանիստ քաղաք։
1672 Ծնվում է Ռուսաց Մեծն Պետրոս Կայսրը։
1700 Ռուսաստանում սկսվում է տարեգրութիւն (յունվարի 1-ին) Քրիստոսի ծննդից։
1701 Առաջին թատրոնը Ռուսաստանում։
1703 Առաջին լրագրի հրատարակելը Ռուսաստանում։
1705 Քաղաքական գրերի տպագրութիւնը Ռուսաստանում։
1709 Վախտանգը հիմնում է Թիֆլիսում տպարան, սկսում է գրել վրաց պատմութիւն և տպում է գրքեր։
1716 Ալանացիք Քարթլը ու Կախեթը աւերում են։
1723 Մահմադ-Ղուլի խանը աւերում է Թիֆլիսը և կողոպտում է Սիօնի եկեղեցին։
1724 Վախտանգը տանում է իւր հետ Ռուսաստան Պետրոս Մեծի հրաւէրով 5 եպիսկոպոս, 6 վարդապետ 5 ազնուակ. և 140 աշխարհական։
1725 Մեծն Պետրոս Կայսրը մեռնում է։
1743 Մահուան պատիժը ոչնչանում է։
1752 Թէյմուրազ Թագաւորը հալածում է պարսիկներին Երևանից և նորա բնակիչներին բնակեցնում է այժմեան Հաւլաբար թաղում։



1754 Առաջին բանկի հիմնելը Ռուսաստանում։
1755 Մոսկվայում առաջին համալսարանի բացումը։
1767 Ծաղկի պատուաստելը մտցնվում է Ռուսաստան։
1768 Թուղթ փողի գործածութիւնը Ռուսաստանում։
1769 Հերակլէն, Գօրի, Սղնախ, Թելաւ, Բօրժօմ և ուրիշ տեղեր բերդ է շինում, հիմնում է տպարան, զինարան, Թնդանօթ է ձուլում, կտրում է դրամ, և գրքեր է տպում։
1788 Անտօն Ա. Թարգմանիչ և լեզուագէտ կաթողիկոսը վախճանվում է։
1785 Կովկասի փոխարքայութեան հիմնելը։
1786 Պետական բանկի հիմնելը։
1795 Աղա-Մահմադ խանը յարձակվում է Թիֆլիսի վերայ և աւերում։
1799 Վրաց Գէօրգի XIII-ը յանձնում է Վրաստանը Ռուսաստանին։
1801 Վրաց և ռուսաց մէջ 10 յօդուածից բաղկացած դաշնագրի ստորագրելը։
1802 Ռուսաստանում Մինիստրութիւնը հիմնւում է։
1804 Մինգրելիան և Իմէրէթը միանում են Ռուսաստանի հետ։
1809 Ֆինլանդիան միանում է Ռուսաստանի հետ։
1814 Ռուսները մտնում են Փարիզը։
1815 Լեհաց Թագաւորութեան միացումը Ռուսիայի հետ և Վիեննայի դեսպանաժողովը։
1830 Առաջին և մեծ խօլերան Ռուսաստանում։
1837 Պուշկինի մահը։
1841 Լերմոնտովի մահը։
1844 Կռիլովի մահը։
1844 Վորոնցովի փոխարքայ նշանակուելը։
1859 Կովկասեան 69-ամեայ պատերազմների վերջանալը և Շամիլի գերի առնելը։
1861 Ստրկութեան ոչնչացումը։
1864 Կովկասի վերջնականապէս նուաճումը։
1866 Մեծ իշխ. Միխայիլ Նիկ. փոխարքայ նշանակուելը։
1877 Ռուս-Տաճկական պատերազմը։
» Նեկրասովի մահը։
1878 Սան-Ստեֆանոյի դաշնադրութեան ստորագրելը։
1882 Վրաց վերջին շառաւիղը-հայազգի Մարիամ Թագուհին մեռնում է և թաղվում Թիֆլիզի Հայոց Վանքի եկեղեցու հիւսիսային կողմը պատի տակ։
1883 Տուրգենևը մեռնում է։
1888 Կայսր Աղեքսանդր III-ը այցելում է Կովկասը, Կայսրուհւոյ և Թագաժառանգի հետ։

## Հայոց պատմութեան

### Նշանաւոր անցքերը

Քրիստոսից առաջ։

2492 Հայ ազգի սկզբնաւորութիւնը.
2346 Հայոց տէրութիւնը սկսւում է։ Հայոց Թագաւորութեան սկիզբը Պարոյրից։
149 Սկսւում է Արշակունեաց Թագաւորութիւնը Վաղարշակից։

Քրիստոսից յետոյ։

30 Աբգար Հայոց Թագաւորը նամակ է ուղարկում Քրիստոսին։
34 Թադէոս Առաքեալը Ս. Գեղարդը տանում է Հայաստան, մկրտում է Աբգարին և ժողովրդից շատերին։
50 Թադէոս Առաքեալը նահատակւում է։
51 Ս. Թադէոսի Եղիշէ անունով աշակերտը նահատակւում է Արցախ գաւառում (այժմ Քիշ գիւղում)։

60 Թադէոսի աշակերտ Ստաթէոսը Սիւնեաց գաւառում նահատակ-ւում է (Տաթեւու վանքը):
62 Բարդուղիմէոս Առաքեալը նահատակւում է Աղբակում:
79 Երեւան քաղաքի հիմնարկութիւնը:
197 Վաղարշը հիմնում է Վաղարշապատը:
253 Խոսրով Թագաւորը հիմնում է Գաւրէժ քաղաքը (Թաւրիզ):
257 Գրիգոր Լուսաւորչի ծնունդը:
303 Ս. Գրիգորը ձեռնարկում է Ս. Էջմիածնի շինութիւնը:
Արիստակէս Հայրապետը վերադառնում է Նիկիոյ Ս. Ժողովից՝ բերելով իր հետ հաւատոյ հանգանակը:
Գրիգորիսը Աղուանից կաթողիկոս է կարգւում:
406 Մեսրոպը գտնում է մեր այբուբենը:
Արշակունեաց Թագաւորութիւնը վերջանում է:
451 Վարդանանց պատերազմը: (յունիսի 2-ին):
452 Կաթողիկոսական Աթոռի փոխադրումը Ս. Էջմիածնից Դուին:
458 Վարդանայ դուստր Շուշանիկը նահատակւում և թաղւում է Թիֆլիզում (Մետեխի բերդում):
539 Եդեսիայում յայտնւում է Քրիստոսի Աբգարին ուղարկած դաստառակը:
551 Մովսէս կաթողիկոսի հրամանով Աթանաս Տարօնացին յօրինում է եկեղեցական տոմարը:
653 Կարգւում է Վարագայ Ս. Խաչի տօնը:
706 Արաբացի Կոշմ ոստիկանը Նախջեանի եկեղեցում 800 հայ իշխաններին կրակով նահատակում է:
924 Կաթողիկոսական Աթոռը Դուինից Վասպուրական է փոխադրւում:
961 Անին դառնում է Բագրատունեաց մայրաքաղաք: Բագրատունեաց Թագաւորութեան սկիզբը:
968 Խոսրովանոյշը հիմնում է Սանահնոյ և Հաղպատայ վանքերը:
993 Կաթողիկոսական Աթոռը Վասպուրականից Անի է փոխադրւում:
» Բագրատունեաց Թագաւորութիւնը վերջանում է:
1080 Նորոգւում է Հայոց Թագաւորութիւնը Կիլիկիայում Ռուբինեանց ձեռքով:
1147 Կաթողիկոսական Աթոռը տեղափոխւում է Անիից Հռոմկլայ—Կիլիկիայ:
1173 Ներսէս Շնորհալու մահը:
1294 Կաթողիկոսական Աթոռը փոխադրւում է Սիս:
1311 Երուսաղէմում սկսւում է հայ-ազգի պատրիարքութիւնը:
1323 Անի քաղաքի կործանումը:
1393 Մեր ազգի Թագաւորութեան վերջանալը:
1441 Կաթողիկոսական Աթոռը վերջնականապէս փոխադրւում է Ս. Էջմիածին:
1461 Կ. Պոլսի պատրիարքութեան սկիզբը
1513 Երեւանը գրաււում է Տաճիկներից:
1567 Վենետիկում տպագրւում է առաջին հայերէն Սաղմոսը:
1603 Շահ-Աբաս պարսից Թագաւորը հայերին գերի է տանում Պարսկաստան—(Ջուղայի գաղթելը):
1785 Սիմէօն Կաթողիկոսը Ս. Էջմիածնում հիմնում է տպարան:
1781 Նոր-Նախիջեանի հիմնելը:
1784 Հայոց առաջին լրագրի հրատարակ. Հնդկաստանում:
1789 Շուշուայ ամրոցի հիմնելը:



1798 Ղարաբաղից 1100 ընտանիք գաղթում են դէպի Ղզլարու կողմերը:
1799 Առաջին պարբերական հրատարակութիւնը Վենետիկում «Տարեգրութիւն» անունով:
1813 Մոսկվայի Լազարեան Ճեմարանի բացումը:
1823 Հայր Միքայէլ Չամչեան վարդապետը (պատմագ.) վախճանւում է:
1825 Ներսէս Ե աշտարակեցի կաթողիկոսը հիմնում է Ներսիսեան դպրոցը:
1828 40 հազար հայ գաղթում է Ռուսաստան:
1837 Հաստատւում է Սուրբ Էջմիածնի Սինոդոսը:
1839 Երեւանի Թեմական դպրոցի հիմնուելը:
1842 Ղարաբաղի Թեմական դպրոցի բացուելը:
1857 Ներսէս Ե կաթողիկոսը վախճանւում է (փետրվարի 14-ին):
1858 Խալիբեան ուսումնարանի բացումը:
1850 Հայոց առաջին Թատրոնը Թիֆլիսում:
1860 Հաստատւում է Տաճկահայոց սահմանադրութիւնը:
1858 «Մեղու Հայաստանի» լրագրի հրատարակութիւնը:
1863 Բագուի Մարդասիրական ընկերութիւնը հիմնւում է:
» Միքայէլ Նալբանդեանցը վախճանւում է:
1868 «Արարատ» ամսագիրը հրատարակւում է Ս. Էջմիածնում:
1869 Թիֆլիսում բացւում է Ս. Գայանեան առաջին Հայ օրիորդաց միջնակարգ դպրոցը:
1872 «Մշակ» լրագիրը հրատարակւում է:
1873 Ս. Էջմիածնում բացւում է Գէորգեան Ճեմարանը:
» «Փորձ» ամսագ. հրատարակւում է:
1875 Նոր-Նախիջեանի Թեմական դպրոցի բացումը:
1877 Մարիամեան—Յովնաննեան օրիորդական դպր. բացումը Թիֆլիսում:
1878 Ռուսները առնում են Էրզրումին (Կարին): Բերլինի վեհաժողովում ստորագրւում են Հայոց ինքնավարութեան 61-րդ յօդուածը:
1879 Վերադառնում են Հայաստանեաց եկեղեցու ծոցը 35 ընտանիք հռոմէական հայք՝ Մաղաքիա Օրմանեան վարդապետի առաջնորդութեամբ:
» Ստեփ. Նազար. վախճանւում է:
1881 Թիֆլիսում հիմնւում է Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, նախ. Բ. Նաւասարդեանի:
» «Արձագանք» շաբաթաթերթը հրատարակւում է:
1882 Թիֆլիսում կայանում է Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովը:
» Վախճան. Գաբ. եպ. Այվազովսկին:
» Կատարւում է «Մեղու Հայաստանի» լրագրի 25-ամեայ յօբելեանը:
1884 «Նոր-Դար» ամենօրեայ թերթի հրատարակումը:
1887 Անդրկովկասում տարածւում է հայերի մէջ ևս զինուորագրութիւնը:
1888 Մակար Ա. Կաթողիկոսը ընդունւում է Թիֆլիսում Կայսեր Աղէքսանդր III-ից, և նոյն թուին Կաթողիկոսը այցելում է Բագու և Գանձակ քաղաքներին:
1888 Յայտնի վիպասան Րաֆֆին վախճանւում է:
1889 Պարսից Շահ-Նասրէդինը Փարիզի աշխարհահանդէսից վերադառնալիս այցելում է Ս. Էջմիածինը:
1889 Էջմիածնում վախճանւում է մա-

տեսուչը և ուսուցչապետ Ստեփ. Պալասանեանցը:

1889 Արեւելեան լեզուաց պրօֆ. և յայտնի հնագէտ Քերովբէ Պատկանեանը վախճանւում է:

1889 «Մուրճ» ամսագիրը հրատարակւում է:

1890 Իտալացւոց թագաժառանգը այցելում է Ս. Էջմիածին և փառաւոր կերպիւ ընդունւում Հայոց Կաթողիկոսից:

1891 Էջմիածնում վախճանւում է Մակար I կաթողիկոսը (ապրիլի 16-ին):

» Մոսկվայում վախճանւում է Մկրտիչ Էմինը:

» Մեծ բարերար Մկրտիչ Սանասարեանի մահը:

» Կ. Պոլսում վախճանւում են յայտնի դերասան Ադամեանը և երգիծաբան Պարոնեանը:

1892 Ջրօրհնեաց հանդէսի ժամանակ Տփխիսի վանքի եկեղեցու շինած ժամանակաւոր կամուրջի խորտակուելուց 40 հոգի խեղդւում են Կուր գետում, հոգեւորականութիւնն ազատւում է:

» Կովկասում և Թուրքաստանում խոլերայի կոտորածը:

» Մայիսի 5-ին Ս. Էջմիածնայ համագումարին նշանաւոր ժողովը Խրիմեան Հայրիկին միաձայնութեամբ (72) և Մատթէոս եպ. Իզմիրլեանին 52 ձայն) կաթողիկոսական թեկնածուներ ընտրեց:

» Վախճանեցաւ Գամառ-Քաթիպայ յայտնի հայոց բանաստեղծը:

» Խորէն-Նարբէյ, Գ. Սրուանձտեանց, Ստեփաննոս Մխիթարեան և Մամբրէ Սանասարեան սրբազանների մահը:

» Յայտնի հրապարակախօս Գրիգոր Արծրունու մահը:

1893 «Աղբիւր և Տարազ» թերթերը հրատարակւում են բժ. Գ. Ալխազեանի խմբագրութեամբ:

» (տես. 26.) "Հայրիկը" կաթողիկոս օծուեցաւ.

» «Մշակը» նորից հրատարակւում է Ա. Քալանթարեանի խմբագրութեամբ:



# VI. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

## I.

ԼՈՒՍՆՈՅ ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԻՑ 362,334 վերստ է: Լուսնոյ չափը երկրից 50 անգամ փոքր է: Թէ որքան ժամանակամիջոցում երկիր կարող է կերակրել մարդկութեանը Ս. Բոլէնշտէյնն ասում է, որ 2072 թուին երկիրս կունենայ ամենաքիչը 5,994,000,000 հոգի բնակիչ: Այս ժամանակից յետոյ երկիրս այլ ևս չի կարող կերակրել այսպէս շատ բազմացող բնակիչներին. (ի հարկէ այս ենթադրութիւն է և ոչ թէ հաստատ ճշմարտութիւն,:

ԵՐԿՐԱԳՆ. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ 509,950,714 քառակ. կիլօմետր է:

ՑԱՄԱՔԸ երկրագնդի մօտ $1/3$ մասն է կազմում—2,468,804 հող 6,802,634 ջուր:

ՕՎԿԷԱՆՈՍՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԽՈՐՈՒԹԻՒՆԸ: Ատլանտեանը 3,790, Հնդկականը 3,444, Մեծ-խաղաղականը. 4003, Հարաւային կիսագնդինը 3,390 մետր:

ՆՇԱՆԱՒՈՐ ԳԵՏԵՐԻ ԵՐԿԱՐՈՒԹԻՒՆԸ: Միսիսիպին 5,890 կիլօմետր, Նեղօսը 5,640, Ամազօնը 5565, Եանգ-ձէ-կիանգը 5,410, Օբը 4,230, Ամուրը 4.155, Վօլգան 3,500, Դանուբը 3,042. Դօնը 1,807, Ուրալը 1,520, Ռէյնը 1.370. Սէնան 600, Թեմզան 325 կիլօմետր:

## II.

ՄԱՐԴՈՒՍ ՍԱՐՄԻՆԸ ունի մօտաւորապէս 3,831,248 ծակոտիք և ամեն մի քառակուսի դիւյմի վրայ գալիս է՝ ճակատին 1,258, կզակներին 548, վզին 1,303, կրծքին 1,136, ծոծրակին 417, ձեռքի ափին 2,736, մատներին 1,740, ոտի ներբանին 2,685: Ամառուայ շոգօրը մարդուս մարմինից այս ծակոտիքներից դուրս է հոսում 15-20 կիլօգրամ ջուր,—քրտինք, թուք, արցունք և այլն:

ՄԱՐԴՈՒ ՄԱԶԵՐԻ ԹԻՒՆ Է ՄՕՏ 127,920:

ՈՐՔԱ՞Ն Է ՈՒՏՈՒՄ ՄԱՐԴԸ: Մինչև 70 տարին հասած մարդը ուտում է 20 վագոնից աւելի կերակուր, այսինքն մօտ 80,000 կիլօ. 25,550 օրում:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՄԻՋԻՆ ԹԻՒԸ:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մինչև | 60 տ. հասն. | են 100-ից | | 6 մարդ | |
| » | 80 » | » | 500 | 1 | » |
| » | 100 » | » | 1000 | 1 | » |

Մեռնում են տարէնը 33 միլ. այսինքն ամեն օր 96 հազար մարդ, ամեն մի ժամում 3730 մ. ամեն մի րոպէում 60. մի վայրկեանում մի հոգի:

Ծնւում են ամեն տարի 42 միլ. այսինքն 9,500,000 աւելի, քան մեռնում են:

Պսակւում են 82 միլ., 120 մարդուն մի պսակ է գալիս:

Երկրագնդի ազգերը խօսում են 3600 լեզուից աւելի:

Բոլոր կրօնները երկրագնդի վերայ 1000-ից աւելի են:

III.

ԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ։

Երկրագնդիս վերայ բնակւում են մօտ 1,510 միլիօն բնակիչ, որոնցից Եւրոպայում 349 միլ., Ասիայում 897 միլ., Աֆրիկայում 204 միլ. Ամերիկայում 121 միլ. և Աւստրալիայում 5 միլիօն։

ԵՒՐՈՊԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՑԵՂՈՎ։

ՍԼԱՎՈՆԱՆԵՐՆ են 94,355,000—(սրանցից 65 միլ. ռուսներ և ռուսիներ, 11 միլ. լեհեր, 7 միլ. չեխեր, մօրաւներ, 10 միլ. սերբիացիք, բուլգարներ և կրօատներ)։ ՌՕՄԱՆԱԿԱՆ ԿԱՄ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱԶԳԵՐԸ — 98,948000 հոգի։ (Սրանցից ֆրանսիացիք 40 միլ. իտալացիք 30 միլ. սպանացիք և պօրտուգալացիք 23 միլ. ռումանացիք 9 միլ.։ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԶԳԵՐ—115,130,000. (սրանցից գերմանացիք և հօլանդացիք 63 միլ. անգլիացիք 40 միլ., սկանդինաւեցիք 9 միլ.)։ ՀԱՅԵՐԸ 5 միլիօն են։ Հրէաները մօտ 9 միլլիօն։ Կրօնով ամբողջ երկրագնդի վերայ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ։

| | | | |
|---|---|---|---|
| Կաթոլիկներ ....... | 235 միլ. | | 469 |
| Բողոքականներ..... | 134 | » | |
| Ուղղափառներ...... | 91 | » | |
| Այլ և այլ քրիստ.... | 10 | » | |
| ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐ... | — | » | 171 |
| ՀՐԷԱՆԵՐ ........ | — | » | 9 |
| ԿՌԱՊԱՇՏՆԵՐ .... | | | |
| Բուդդայականներ.... | 486 | » | 862 |
| Բրամինականներ .... | 139 | » | |
| Ֆետիշներ........ | 235 | » | |
| Ընդամենը........ | | | 1511 |

IV.

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ համարւում են, Լօնդօն 5,190,000 բնակիչ, Պեկինը 4,500,000, Փարիզ 2,228,806, Վիեննան 1,136,270, Բերլին 1,125,000, Կ. Պոլիս 830,000, Նեապոլ 450,000, Պետերբուրգ 929,000, Մոսկուայ 754,103։

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԹԻՒԸ։ Ռուսաստանում—9, Իտալիայում—21, Գերմանիայում—20, Ֆրանսիայում—14, Անգլիայում—12, Իսպանիայում—10, Հօլանդիայում—3, Շվէյցարիայում — 3, Շվէցիայում—2, Ռումանիայում—2։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ։ Եւրոպայի վեց մեծ—պետութեանց.—Պրուսիայինը 316 միլ. ֆրանկ, Աւստրիայինը 319, Իտալիայինը 382, Ֆրանսիայինը 797, Անգլիայինը 746, Ռուսաստանինը 620, Ընդամենը 3078 միլիօն։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԶՕՐՔԸ (նշանաւոր տէրութեանց) խաղաղ ժամանակ 3,263,474 հոգի։ Ռուսաստանում 876,838 հ. Ֆրանսիայում 512,472 հ. Գերմանիայում 491,840, Աւստրիայում 290,106, Իտալիայում 240,915, Անգլիայում 221,358, Տաճկաստանում 182,000, Իսպանիայում 131,400, Շվեցիայում 33,020 հոգի։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ Եւրոպայի միայն հինգ մեծ տէրութեանց զօրքերի թիւը հասնում է մինչև 21,000,000 միլ։

ԵՒՐՈՊԱՅԻ ԾՈՎԱՅԻՆ զօրքը բաղկացած է 191,000 հոգուց։

Երկաթուղիների գիծը Եւրոպայում մօտ 188,593 կիլօմետր է։

Հեռագրաթելի երկարութիւնը Եւրոպայում 1,440,698 կիլօմետր։

Եւրոպայում տուրքը ամենից շատ վճարւում է Ֆրանսիայում և ամենից քիչ Ռուսաստանում։

Երկրագնդիս վերայ գտնուած պարբերական թերթերի թիւը մօտ 36,000 է։ Եւրոպայում 20,000, Ասիայում 3,000, որից 2,000 Ճապօնիայում); Աֆրիկայում 200, Միացեալ նահանգներում 12,500։ Աւստրալիայում 700, Գերմանիայում 5,500, Ֆրանսիայում 4,092, Անգլիայում 4,000, Իտալիայում 1,400, Իսպանիայում 850, Ռուսաստանում 800, Յունաստանում 600, Շվէյցարիայում 450 և այլն։



## ՀԱՅԵՐԻ ԹԻՒԸ

—

| | |
|---|---|
| ա) Տաճկա-Հայաստանում. | 1,768,000 |
| » Եւրոպական . . | 287,000 |
| » Միջագետքում | 12,000 |
| » Կիլիկիայում. . | 244,000 |
| » Եգիպտոսում . | 9,200 |
| » Մնացեալ Փոքր-Ասիայում . . | 689,000 |
| բ) Ռուսաստանում Եւրոպական (և Սիբիրիայում) | 185,000 |
| » Անդր-Կովկասում. | 1,380,000 |
| գ) Պարսկաստանում մօտ. . | 174,000 |
| դ) Հնդկաս. և Ասիայում | 48,000 |
| ե) Ռումանիա և Բուլգարիա | 14,500 |
| զ) Հունգարիա և այլ Եւրոպական երկրներում . . . | 15,900 |
| է) Ամերիկա (հարաւային և հիւսիսային)։ ....... | 10,850 |
| ը) Երկրագնդի այլ և այլ մասերում՝ մօտ ....... | 9,200 |
| | 4,846,660 |

Պօլսում հայերի թիւը մօտ 230—260,000 է հասնում։

| | |
|---|---|
| Թիֆլիսում. ........ | 50 — 55,000 |
| Իսկ 1870 թւի ժողովրդագրութեամբ, պանդուխտների թիւը, Կ. Պօլսում հասնում էր ........, | 50,000 |
| Թիֆլիսում և Բաթումում. | 10,000 |

1892 Թ։ խօլերան Անդրկովկասում։

—

Խոլերայի երևալու օրից մինչև տարուայ վերջը 1892 թ.

Տփխիսում խոլերայով յունիսի 13-ից (խոլերայի երևալու առաջի օրից) մինչև հոկտեմբերի մէկը հիւանդացան 545 հոգի, մեռան 240 հոգի։

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Յունիսին | հիւ. | 64 | հոգ. | մեռ. | 35 հոգ. |
| Յուլիսին | „ | 365 | „ | „ | 51 հոգ. |
| Օգոստոսին | „ | 97 | „ | „ | 57 հոգ. |
| Սեպտեմբ. | „ | 14 | „ | „ | 7 հոգ. |

Ընդամենը հիւ. 545 մեռ. 240 հոգ.

Անդրկովկասում այդքան ժամանակուայ միջոցում հիւանդացան 5971 հոգի, մեռան 3262 հոգի.

ԽՈՒԼԵՐԻ ԵՒ ՀԱՄՐԵՐԻ ԹԻՒԸ Ռուսաստանում 56000-ին է հասնում. այդ հաշւով 1800 մարդուն մի խուլ ու համր է գալիս և մեծ մասը խուլ ու համրերից՝ լեռնոտ տեղերից են.

—

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԹԻՒԸ Ռուսաստանում։ Ինչպէս երևում է վիճակագրական տեղեկութիւններից, մի տարուայ ընթացքում 1736 հոգի ինքնասպանութիւն են գործել. 6401 սպանութիւն և 763 մանկասպանութեան դէպք է պատահել։



# VII. ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԵՐԿՐԱԳՆԴԻՍ ՆՇԱՆԱՒՈՐ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԱԶԳԵՐԸ ԻՐԱՆՑ ԵՐԿՐՆԵՐՈՎ.

| | Անունները։ | Տիրապետող կրօնը։ | Պետութեան գլուխը։ | Տարածութիւնը ք. քիլ. | Բնակչաց թիւը։ | Մայրաքաղաքները։ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Արաբիա | Մահմետական | Նահապետական | 2,300,000 | 3,000,000 | Սիվան |
| 2 | Արգենտին. Հան. | Քրիստոնէակ. | Նախ. Լուիս Պենա | 2,835,969 | 4,000,000 | Բուէր-Այրէս |
| 3 | Անամ | Անզգ. եկեղ. | Մեարին, Տամ-Տայ | 230,000 | 21,000,000 | Գուէյի |
| 4 | Անգլիա | » „ | Վիկտորիա կայս. | 314.628 | 36,000,000 | Լօնտոն |
| | » գաղթակ. | » » | „ „ | 24,964,096 | 180,000.000 | |
| 5 | Աւստրո-Հունգ. | Կաթոլիկ | Ֆրանց-Յովսէփ | 676,667 | 38,000,000 | Վիեննա |
| 6 | Աւգանստան | Մահմետական | Աբդուռահման | 550,660 | 4,000,00· | Քաբուլ |
| 7 | Բելուճստան | Մահմետական | Միր-Խօդադադ | 315,015 | 350,000 | Գելատ |
| 8 | Բելգիա | Կաթոլիկ | Լէոպոլդ II. թագ. | 29,457 | 6,000,000 | Բրիւսէլ |
| 9 | Բուլղարիա | Օրթոդոքս | Ֆերդինանդ իշխ. | 99,873 | 5,000,090 | Սօֆիա |
| 10 | Բրազիլիա | Կաթոլիկ | Նախ. Ֆ. Պէյխս. | 8,337,213 | 15,000,000 | Րիօ-ժանիէրօ |
| 11 | Բուխարա | Մահմետական | Սէիդ-Աբդուլ Խմ. | 239,000 | 2½ միլ. | Բուխարա |
| 12 | Գերմանիա | Աւետարանա. | Վիլհելմ II. | 540,418 | 47 „ | Բերլին |
| 13 | Հաբէշստան | Հայադաւան | Մենէլիք II. | 508,280 | 5 „ | Գոնդար |
| 14 | Հոլանտիա-գաղ. | Բողոքական | Վիլհելմ III. | 2,036,291 | 4½ „ | Հագա |
| 15 | Յունաստան | Օրթոդոքս | Գէորգ I. | 68,688 | 2 „ | Աթենք |
| 16 | Դանիա | Լիւտերական | Քրիստիան. IX. | 232,302 | 2½ „ | Կոպէնհագէն |
| 17 | Եգիպտոս | Մահմետական | Աբբաս-փաշա | 994,600 | 7 „ | Գահիրէ |



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 18 | Իսպանիա և գաղ. | Կաթոլիկ | Ալֆոնս III խնամ. | 1.633,817 | 27 միլ. | Մադրիտ |
| 19 | Իտալիա | Կաթոլիկ | Հումբերտ I. | 286,588 | 30½ „ | Հռոմ |
| 20 | Չինաստան | Կռապաշտ | Կվանգ-սու | 11,574,356 | 403 „ | Պեկին |
| 21 | Կոլումբիա | Կաթոլիկ | Ռաֆ-Նունեց | 1,118,100 | 4 „ | Բոգոտա |
| 22 | Կոնգօ | » | Բելգ. (թագ.) | 2,735,158 | 17 „ | Բոմա |
| 23 | Ռուսաստան | Օրթոդոքս | Աղեքսանդր III. | 20,666,445 | 115 „ | Ս.Պետերբուրգ |
| 24 | Կորէյա | Կաթոլիկ | Թուեջի | 218,192 | 10½ „ | Սէուլ-(Կեօնգ) |
| 25 | Մեքսիկա | Կաթոլիկ | Նախ. Դիաց | 1,946,292 | 11 „ | Մեքսիկա |
| 26 | Մարօկօ | Մահմետական | Մուլէյ-Հասան | 816,00· | 8 „ | Ֆէզ |
| 27 | Պարսկաստան | Մահմետական | Նասրէդին-Շահ | 1,648,125 | 9 „ | Թեհրան |
| 28 | Պերու | Կաթոլիկ | Նախ. Բերմուդէս | 1,049,970 | 3 „ | Լիմա |
| 29 | Պորտուգալիա | Կաթոլիկ | Դօն-Կարլոս թագ | 89,143 | 5 „ | Լիսաբոն |
| 30 | Ռումինիա | Օրթոդոքս | Կարլօս | 129,947 | 6 „ | Բուքրէշ |
| 31 | Սերբիա | Օրթոդոքս | Աղեքսանդր I. | 48,586 | 2 „ | Բելգրադ |
| 32 | Սիամ | Բուդդայական | Չուլալօնգկօրին | 726,550 | 9 „ | Բանկօկ |
| 33 | Միացեալ նահ. | Քրիստոնեա. | Կլիվելենդ | 9,668,272 | 62 „ | Վաշինգտօն |
| 34 | Տաճկաստան | Մահմետական | Աբդուլ-Համիդ II. | 2,061,224 | 21 „ | Կ. Պօլիս |
| 35 | Ֆրանսիա և գաղ. | Կաթոլիկ | Սադի-Կարնօ. | 3,996,038 | 76 „ | Փարիզ |
| 36 | Ղարադաղ | Օրթոդոքս | Իշ. Նիկոլայ | 9030 | ¼ „ | Ցեթինէ |
| 37 | Չիլի | Կաթոլիկ | Նախ. Դօն Մոնտ | 753,216 | 3 „ | Սան-Թագօ |
| 38 | Շվէյցարիա | Բողոքական | Նախ. Կարլ-Շենկ | 4!,346 | 3 „ | Բերն |
| 39 | Շվեցիա-Նորվեգ. | Լիւտերական | Օսկար II. | 775,996 | 7 „ | Շտօգհոլմ |
| 40 | Էկվատօր | Կաթոլիկ | Նախ. Կորտէրօ. | 650,937 | 1½ „ | Կվիտօ |
| 41 | Եապօնիա | Սինդօյի օրէն | Մուտսու-Խիտօ Կայ | 382,447 | 40 „ | Տօկիօ |



Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցին

# VIII. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ՋԱՆԱԶԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՅՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ։

Ձիու յղանալուց մինչև ծնելը տևում է $48\frac{1}{2}$ շաբաթ կամ 340 օր։ (պատահում է և 330 կամ 419 օր. էլ)։
Կովը . . . . $40\frac{1}{4}$ շաբաթ կամ 285 օր. (լինում է բացառութիւն 240--321 օր. ևս)
Ոչխարը. . . 28 շաբաթ կամ 150 օր. (պատահում է 146–198 օր.)
Այծը . . . . $28\frac{1}{2}$ շաբաթ կամ 253 օր.
Խոզը . . . . 17 շաբաթ կամ 120 օր (բացառութիւն լինում է 109 կամ 133 օր)
Շունը. . . . 9 շաբաթ կամ 63–65 օր.
Կատուն . . 8 շաբաթ կամ 56–60 օր.

—

Շագանակներ (ծաբլի) պահպանելու եղանակը.—Մինչև մի տարի շագանակները հեշտեայ կերպիւ են պահպանւում։ Ձմեռուայ սկզբին շագանակներն ածում են փայտէ կամ քարէ ամանի մէջ՝ ամենաչոր աւազով և չոր ու զով տեղում պահում։

—

Եղինջը (եօնջայ) մեզանում համարւում է անպէտք քաղհանելու խոտ. — Այն ինչ արտասահմանում նա զարմանալի օգտակարութիւն ունի ընտանի կենդանիների և թռչունների համար. եթէ մէկը կամենում է որ կովերն աւելի կաթը տան և վրայ գան, թող ամառը, երբ նրանք արօտից վերադառնում են, կերակրէ նրանց եղինջով։ Եղինջը քաղելուց յետոյ՝ մանր կտրատել, վրան ածել եռացած ջուր, քիչ աղ անել և տալ կենդանիներին։ Իսկ թռչունների համար պէտք է աւելի մանր ջարդել և ապա միայն խառնել թեփի հետ և տալ թռչուններին։ Ով միանգամ փորձէ այս միջոցը միշտ կ՚շարունակէ նրան։

—

Պտղատու ծառերը որդերից ազատելու հնարք.—Երեսուն երկու գաւաթ (մաս) ջրի մէջ մէկ գաւաթ (մաս) թունդ քացախ խառնուած սրսկել պտղատու ծառերին ծաղկելու ժամանակ։ Նաև շատ օգտակար է դրջել ծառերը օշինդր-խոտի եփած ջրով։

Նոյնպէս այս զարմանալի և հասարակ հնարը գտան Ամերիկայում, որը հետևեալն է։ Ամեն ծառին պէտք է վեց-վեց հատ երկաթի մեխ խփել։ Երկաթի մեխերը ծառի մէջ ժանգոտելով առաջացնում են թթուութիւն, որը տարածւում է ծառի ամեն մասերում, որից որդները խորշում են։

—

Կաթնատու կովերի նոր նշաններ.—Շվէյցարացի Օսկար-Գեսլը անասունների ուշադրութիւնը դարձնում է ողնաշարի վրայ գտնուած մի փունջ մազի վրայ։ Այս փունջը ամեն մի կենդանու վրայ զանազան գրութեամբ է լինում։ Քանի նա մօտ է մէջքի ողին, այնքան կաթնատու է։ Եթէ այս փունջը գտնւում է մէջքի վերջերում ողից յետոյ՝ այն ժամանակ նրանք շատ գիրացող են լինում և ժամանակով գրանցից օգտուելու կենդանիք են դուրս գալու։ Գեսլը 30 հատ կովի վրայ փորձեց և այս նշանները 29 կովի վրայ ճշմարտացաւ. իսկ մի կովինը, թէև գերազանց կաթնատու էր, բայց այդ փունջը գտնւում էր ոչ թէ եռեր, այլ ընդհակառակը

—

Ձիաներին շնաձանձերի և այլ մանր կենդանիների խածելուց ազատելու հնարք.—Մէկ մասն մաքրած կարբոլեան թթուութիւնից խառնել վեց մաս Ձէյթունի (деревяная масло) իւղի հետ և քսել ձիերան լծելուց առաջ. ականջների մէջը պիտի սերտ քսել։

# IX. ՏԱՆՏԻԿԻՆ

**Փայտոջիլից (բաղլինջ) ազատուելու միջոց.**— Ապթեկի մէջ լուածաղիկ (Персидскій порошокъ) ածելու ցընցուղ տալ բոլոր ծակածակների վերայ ուր որ փայտոջիլ կայ: Սկիպիտարն էլ լաւ է: Լաւ է նոյնպէս նաւթը մէջը պղպեղ ածած: Կարելի է նոյնպէս փայտոջիլ գտնուած տեղերը քսել քափուրախառն նաւթ:

—

**Ամենահեշտ միջոց դանակներ և պատառաքաղներ մաքրելու.**—Խոհանոցում պէտք է կաւէ մեծ ամանով լի հասարակ մաքուր աւազ դնել, որը մի փոքր թաց արած լինի ջրով: Դանակներն և պատառաքաղները գործածելուց յետոյ՝ պիտի ցցել, այս աւազի մէջ միքանի անգամ քսելով աւազին՝ որ բաւական մաքրւում են: Յետոյ մնում է դրանց լաւ սրբել և մի արևից՝ փոշիով մաքրել: Որքան էլ աւազը շատ շատ փոխուի—ամեն շաբաթ կամ ամիսը երկու անգամ—այնքան աւելի լաւ է, նայած թէ ո՛րքան շատ են դանակները և պատառաքաղները:

—

**Մետաքսէ գործուածներից իւղի բծերը հանել:** Պէտք է վերցնել ձուի դեղնուցը և նրանով բծին քսել, վրան ծածկել քաթանէ փալաս և թաց անել այն՝ եռացրած ջրով. իսկ յետոյ տրորել մի քանի անգամ, կրկնելով այսպէս և ամեն անգամ քաթանը թաց անել եռացրած ջրով և վերջը այն բծի տեղը տաք ջրով լուանալ:

—

**Պատուհանների քրտնելու դէմ հնարք.**—Պէտք է մի քանի անգամ տաք ջրով լուանալ, ջրի հետ շատ քիչ գլիցերին խառնելով:

—

**Լամպաների լուսաւոր և մաքուր այրելու լաւ միջոց.**—Ամէն մի փութ նաւթին մի թէյի գդալ ամենահասարակ լաւ չորացած հասարակ աղ պիտի խառնել:

—

**Գունաւորուած ապակիները մաքրել.**—Վերցրու մի բուռը բանջար (крапива) խոտից եջրի մէջ թաթախելով մի քանի անգամ գունաւորուած ապակիներին քսիր: Եթէ առաջին անգամից հենց բոլորովին չմաքրվեն, կրկնիր այս գործողութիւնը, միայն թէ էլի թարմ բանջար քսիր և յետոյ լուայ մաքուր ջրով. որից յետոյ, ինչ տեսակ ապակի էլ որ լինի վրէն ոչինչ բիծ չի մնայ: Բանջարով, գունաւորուած հայելիներ էլ կարելի է մաքրել, միայն պիտի զգուշանալ, որ հայելու ետևի մասը, այսինքն վրէն կպած սնդիկը թաց լինելով չանցնի. դրա համար կարելի է հայելու շրջանակի բոլորտիքը մեղրամոմ կպցնել և մաքրելուց յետոյ հետ պոկել, որը հեշտ է պոկւում:

—

**Կարտոֆիլ թարմ պահելու կերպ.**—Որպէս զի կարտոֆիլը մինչև ամառուայ վերջը չփչանան և չծլեն, խորհուրդ են տալի, որ առաջուց լուացած կարտոֆիլները չորս վայրկեան եռացրած ջրի մ,ջ ածել, որի մէջ մի փոքր աղ լինի աւելացրած: Սրանից յետոյ կարտոֆիլները չորացնելով, հով և մութ տեղում պէտք է պահել, միայն թէ շատ չլինի միմեանց վրայ ածած:

—

**Կծուած իւղը համովացնելու հնարք.**—Երբ որ իւղին իր ժամանակին կարգին աղ չի լինում արած՝ վերջը կծւում է—համը փոխւում է: Սրա համար իւղին կրկին իր համը տալու համար պիտի կրկին հալել և երեսի փրփրող քափը քաշելով մէջը գցել ամեն կողմից լաւ այրուած մի կտոր հացի կեղև-քերինջ (կեղև չոր տեղից): Մի քանի րոպէից յետոյ իւղը կորցնում է թէ իր վատ համը և թէ հոտը. իսկ հացի կեղևը առնում է վատ հոտ:

—

**Խոնաւ սենեակում իրեղէնները խոնաւութիւնից և բորբոսնելուց ազատ պահելու հնարք.**—Այրուած և հում (քար) կիրը թիթեղեայ ամանների մէջ ածած դնել խոնաւ սենեակների մէջ և այդտեղ եղած գրքերը, սպիտակեղէնները և այլ իրերը պահպանւում են բորբոսնելուց: Նոյնպէս լաւ է ննջարաններում կամ հիւանդի սենեակում մահճակալների տակ դրած մեծ ափսէի մէջ ածած հասարակ աղը: Այսպէսով աղը խոնաւութիւնը իր մէջ է ծծում և կրկին տաք տեղում չորացնելով նոյն ոյժով գործում է:

—

**Մլակների դէմ հնարք.**—Որպէս զի սենեակը մլակներից մաքրուի, պիտի մի կտոր քափուր (camphora) այրել, որի հոտից մլակներն իսկոյն և եթ դուրս են փախչում. կամ սենեակում գիշերները լապտերներ են դնում, որոնց ապակիների վրայ մեղր են քսում, որի վրայ դէպի լոյսը թռչող մլակները և այլ թիթեռները կպչում են:

(ст. кал. 1893 г. 24 іюля)

—

**Մկների դէմ միջոց.** — Հում կիրը (անջուր ածած) ջարդել և բարակ մաղել. այնքան չափ որքան կիրն է, աւելացնել բարակ ծեծած շաքար և խառնել: Այս խառնուրդը այն տեղերում դնել որտեղ մկներ շատ կան: Մկները շաքար շատ սիրելով ախորժակով էլ ուտում են այս խառնուրդը. իսկ հում կիրը փորը մտնելով՝ սպանում է մկանը:

Ст. календ.

—

Որպէս զի կովերը շատ կաթը տան, անգլիացոց մի ամսագիր խորհուրդ է տալիս ամեն առաւօտ կովերին քիչ աղ արած ջուր խմացնել՝ նրա մէջ խառնելով քիչ թեփ:

—

**Խնձորների երկար ժամանակ պահելու կերպը.**—Ամերիկայից Անգլիայ խնձորները տակառներով և արկղներով այսպէս են ուղարկում: Մաքուր (առանց խալի—վնասուած տեղի) խնձորները փաթաթում են ամեն մէկը առանձին սպիրտի և Սալիցիլեան թթուտի հալուածքով (пропитанный спиртовымъ растворомъ салициловой кислоты) լաւ ծծած թղթի մէջ և յետոյ շարում են արկղում կամ տակառում: Այս բաւական է լինում երկար ճանապարհ ուղարկելու համար և երկար ժամանակ չփչանալով իր թարմութիւնը պահում է ինչպէս և իր անոյշ հոտը և հիւթը:

## X. ԳԻՒՏ եւ ԱՐՈՒԵՍՏ

---

Ի՞նչպէս ապրել մինչև երկու հարիւր տարի.—Մի իննսուն և ութ տարեկան ծեր Պրօֆ. Կինտերին յայտնեց արտասովոր երկարակեցութեան հնարը։ Ամենալաւ հնարքը, կազմուածքի քայքայուելու դէմ այնպիսի կերակուրներ են, որոնց մէջ գտնւում են անգործարանաւոր աղեր, որոնք արդէն մեր կազմուածքի բաղադրութեան մեծ մասն են կազմում։

Որքան կարելի է՝ պէտք է գործ ածել պտուղներ, կանանչեղէններ և առաւելապէս խնձոր։ Բայց գլխաւորապէս անհրաժեշտ է, որ ամեն օր 2—3 օղարաժակ զտած ջուր ընդունել, որի մէջ լուծած լինի 15 կաթիլ ֆոսֆորային թթու (фосфорная кислота)։

---

Կոյրի գիւտը կոյրերի համար.- Ղազանում մի կոյր հնարել է հասարակ գրութեանը օգնող մի մեքենայ, որի միջոցով կոյր մարդը մի րոպէում կարող է քառասուն տառ գրել։ Մեքենան սովորական տառեր է դուրս բերում, որով գրութիւնն ամենքի համար հասկանալի է լինում։ Այս մեքենան արժէ 3-4 ռուբլի։

---

Ահա թէ ինչպէս են բազմանում միկրոբները. (մանր կենդանիքը).—Մի լիտր կաթնի մէջ կթելուց մի ժամ յետոյ - ինչպէս փորձը ցոյց է տալիս—յայտնւում են 9 միլիոն միկրոբներ, երեք ժամից յետոյ—30 միլիոն։ 4 ժամից 130 միլ. իսկ 25 ժամից յետոյ 63,500 միլիոն։

---

Բոլոր կաշուէ ոտնամաններն էլ կարելի է ամենահեշտ միջոցով այնպէս անել, որ նրանք ջրից անթափանցելի դառնան։ Դրա համար հարկաւոր է ոտնամանը մի քանի ժամ թողնել խիստ սապնոտ թանձր ջրի մէջ։ Ոտնամանը չորանալուց յետոյ, ոչ միայն պահպանում է իր նախկին փափկութիւնը, այլ և առաւել ևս փափկանում է. կաշուէ բոլոր ծակոտիքների մէջ լցուած օճառի լուծուածքը կազմում է իւղային թթու, որ ամենևին ջուր չէ ներս թողնում։ („Նոր-Դար" № 83 1889 թ.)։

---

Բնագէտները ենթադրում են, որ ամուսինները (մարդ և կին) որոշեալ հասակի հասնելով և ամբողջ շարք տարիների ընթացքում կենակցելով, ընդհանուր գաղափարով միմեանց համակրելով և միևնոյն պայմանների մէջ ապրելով, վերջը միմեանց նման են դառնում։ Վերջերս Ժենևայի լուսանկարչական ընկերութիւնը ցանկանալով վերստուգել, թէ որքան հնարաւոր է այսպիսի ենթադրութիւնները՝ հանեց 78 զոյգ ամուսինների կենդանանկարները։ Հետևանքը այն եղաւ, որ 24 դէպքում մարդու և կնոջ մէջ նմանողութիւնը աւելի շատ է քան թէ քոյր և եղբօր մէջ։ Իսկ 30 դէպքում ամուսինները այնքան էին նմանում միմեանց, որքան եղբայրը քրոջը։

## XI. ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

---

ՍԱՐՍԱՓԵԼԻ ՄԱՀ.—Կալուժեան (Ռուսաստանի) նահանգի— Մարիուտինայ գիւղի երիտասարդներից մինը—Եակով Մատվէեվը պէտք է պսակուէր իր նշանածի հետ։ Հարսանեաց նախընթաց երեկոյեան, Եակովի մայրը ուրիշ տեղ գնացած լինելով, նրան մենակ տանն է թողնում։ Տուն վերադառնալով նա տեսնում է իր որդուն անշնչացած, որ ածխահոտից էր խեղդուել։ Հարևանները վազեցին-վրահասան սկսեցին անշնչացածին ձգձգել որպէս զի ուշքի գայ, բայց ոչինչ հետևանքի չհասնելով, նորափեսին թաղելու պատրաստուեցան։ Նրան գերեզմանատանը թաղելուց յետոյ, մի անցորդ լսում է սաստիկ հառաչանք, որ դուրս է գալիս եղել նոր թաղուած գերեզմանից և այս մասին շտապում է քահանային հաղորդելու։ Նա ուղարկում է տանուտէրի ետևից, հաւաքւում է ժողովուրդը՝ որ փորելով գերեզմանը և բացանելով դագաղի կափարիչը, Մատվէեվին գտնում՝ են մեռած։ Բայց թշուառը երեսի վրայ է լինում պառկած, հագած սպիտակեղէնները բոլորը պատառոտած. իր աչքը վիրաւորուած, երեսից ամբողջ կաշին քերքերուած, ներքի շրթունքը ճղած և մի ձեռը կծած։ (Тифл. Лист. № 79 1893 г.).

---

ՀՆԱՐԱԳԷՏ ՈՐԲԵՒԱՅՐԻ.—Փարիզում մի որբևայրի իր ամուսնոյ գերեզմանաքարի վրայ հետևեալ տապանագիրը գրել տուեց։ «Այստեղ հանգստանում է 72 տարեկան հասակում վախճանուած (անունը Րիկէն), որը թողել է ջահիլ և սիրելի այրի, որի վերաբերութեամբ տարիների զանազանութեան պատճառաւ հանգուցեալը կատարում էր երկրորդ հօր դերը»։

---

ԱՀԱԳԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԸՆԿՈՒԶԵՆԻ.—Գորու գաւառի

Նէխի գիւղի հրապարակում գտնւում է մի մեծ ընկուզենի, որը պատկանում է գիւղացի Գաբրիէլ Մելանաշվիլուն: Այս ծառի հաստութիւնը $22^{1}/_{2}$ արշին է և քանի բարձրանում նեղանում է: Բարձրութիւնը քառասուն արշին է: Երեք ճիւղ ունի, որոնք ուղղուած են դէպի արևելք, արևմուտք և հարաւ. սրանցից ամեն մինը մի հսկայ ծառ է երևում: Որտեղից այս երեք գլխաւոր ճիւղերը բաժանւում են, այնտեղ խոտ է բսնում: Այս ծառը, ինչպէս իւր տէրը հաստատում է, առատ տարին մինչև 50 փութ պտուղ է տալիս:

---

ԱՄԵՆԱՄԵԾ ԹՆԴԱՆՕԹ.—Ներկայ ժամանակիս ամենամեծ թնդանօթը Գերմանիայից է դուրս եկել, որը պատրաստել է յայտնի Կրուպի զինագործարանը: Այս թնդանօթը ուղարկուած է Ամերիկայի—Ճիքագօ քաղաքի համաշխարհահանդէսը, որ քաշում է 7750 փութ: Ամեն մի գնդակ արձակելիս 700 գրուանքայ վառօդ է հարկաւոր լինում: Իսկ մի անգամ թընդանօթից արձակելու պատրաստութիւնը գնդակով, վառօդով և ուրիշ այլ պարագաների հետ քաշում են 2,600 գրուանքայ:

---

Լօնդօնի փողոցներում մի տարուայ ընթացքում կառքերի տակ են ընկել 3635 մարդ, որոնցից 236 հոգի անմիջապէս մեռել են, իսկ 3390 հոգին վիրաւորուել են:

---

ՀՍԿԱՅ ՇՈԳԵՆԱՒ.—Անգլիական մի գործարանում այժմ պատրաստւում է «Gigantic» անունով մի շոգենաւ, որը իւր մեծութեամբ գերազանցում է նշանաւոր «Great-Eastern» նաւից: «Gigantic»-ն ունենալու է 700 ոտնաչափ երկարութիւն, 60 ոտնաչափ լայնութիւն և 450'0 ձիու ոյժ, իսկ սրնթացութիւնը 27 փարսախ (узловъ). ուրեմն Մեծ-ովկիանոսը 100 ժամուայ մէջ, այսինքն 4 օրում կարող է անցնել: Այսպիսով տարածութիւնը կամաց-կամաց իր նշանակութիւնը կորցնում է:

# XII. ԲԺՇԿԱԿԱՆ

## I. ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԸ:

Այստեղ առաջ ենք բերում մի քանի հիւանդութիւնների նշանները, որոնցով հիւանդացողները մինչև բժշկի հասնելը, կարող են օգուտ քաղել: Բայց և այնպէս բժշկի գալը պէտք է շտապեցնել: Այս էլ լաւ պէտք է իմանալ, որ այն հիւանդութիւններն են շուտով անցնում, կամ առողջանում են նրանք, որոնց ժամանակ բժիշկը իւր ժամանակին է վրայ հասնում: Աշխատեցէք նոյնպէս որ բժիշկը շուտ-շուտ չ'փոխէք որ հիւանդին վնաս է:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ—առհասարակ հետևեալներն են լինում, տաքութիւն, կարմրութիւն, ցաւ, ուռուցք, (կարմրութիւնը զանազան է լինում) ցաւը կորատող, ծակող, կսկծալի, խթող, տաքութիւնն էլ այնքան սաստիկ չէ լինում:

Հօնքերի (ВѢКЪ) բորբոքման նշանները, կարմրութիւն, տաքութիւն, չորութիւն, ցաւ, արտասուաց թօրումն. աչքի բորբոքում, որի ժամանակ աչքերից ժահր է հոսում:

Ստամոքսի բորբոքումն.—եթէ դէր է հիւանդը, փղցում է. նշանները—սիրտը խառնում է, բորբոքման նշաններ, թթուհամ, այրումն, փխումն, ստամոքսի ցաւ և ցնցումն (судороги) գոգուած դրութիւն, երբեմն էլ պորտի մօտերքում և արտաթորելուց առաջ ցաւ է զգում:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ.—Շարունակ անընդհատ ցաւ. գործարանների գործողութիւնների խանգարուել, սաստիկ տենդ (ներքին բորբոքման ժամանակ ցաւը աւելի սաստիկ է լինում)։ Լեարդի, սրտի թաղանթի մօտ երիկամունքների գլխի և մէջքի ողնաշարի ցաւը շատ մեղմ է լինում։ Սրա համար բորբոքման նշանը միայն ճնշելու ուժից անընդհատութիւնն է։ Ուղեղի բորբոքման ժամանակ զառանցում է (դէլն է տալիս)։ Կոկորդի բորբոքման նշանը—խեղդոց, խռխռոց։ Թոքերի բորբոքման—հեւոցը։ Տենդը ջղային, բորբոքիչ և փթեցնող է լինում։ Փորի և աղիքների բորբոքումն է՝ եթէ բացի այս նշաններից և զկռտում է։ Ուղեղի բորբոքման ժամանակ, սիրտը խառնում է, բերանից գցում, դէլն է տալիս և քնաբերութեան մէջ է մնում։ Երիկամունքների և աղիքների բորբոքման ժամանակ նոյնպէս սիրտը խառնում է և փսխում է բերանից.

ՏԵՆԴ.—Մարդու գործարանների ընդհանուր թուլութիւն, քնի անհանգստութիւն, ախորժակի պակասութիւն, բերանում դառնութիւն, դողացնում է և յետոյ տաքութիւն է տալիս. լեզուն սարթ-կեղտ է բռնում. Այս հիւանդութիւնը կրկնում է օրու մէջ կամ 1-2-3 օրը միանգամ (շատ անգամ աւելի քան մէկ օրը մի անգամ։) Ամէն օր էլ պատահում է, որ ժամանակամիջոցում ուժից ընկնում է, մարմինը կոտրատւում է, սաստիկ տաքութիւն ունեցած ժամանակն էլ պատահում է որ դէլն է տալիս։

ՍՈՍՈՐԴԻ.—(зѣва) Հազ, խղխղոց, խռխռոց, երբեմն այրող և հեւող ցաւ, կոկորդում չորութիւն, կարմրում է և կուլ տալը դժուարանում, հիւանդը անհանգիստ դրութեան մէջ է լինում, կուլ տալիս սաստիկ ցաւ է զգում, (երբոր բգում դեղձնիկներ—խլեր են յայտնւում)։

ԴԻՖՏԵՐԻՏ.—Սրա նշանները միևնոյն են ինչոր սոսորդինը, միայն՝ բացի նրա նշաններից ամբողջ կոկորդում և կատիկում,



ևս առաւել նշաձև դեղձիկների վրայ յայտնւում են գորշագոյն փառ, երբեմն էլ հիւանդը ընկնում է սաստիկ ջղային դրութեան մէջ և բերանից վատ հոտ է գալի։ Այս հիւանդութիւնը վարակիչ է և սաստիկ վտանգաւոր, պէտք է զգուշանալ (մեռնում են 4-6 օրից)։

ԴԵՂՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԴԵՂՆԱՑԱՒ.—Մարմնի կաշին ստանում է դեղին կանաչ կամ գորշ գոյն, ջղային դրութիւն, աջու կողին ցաւ ու ծակոցներ։

ԹՈՔԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ.—Այս հիւանդութիւնը ցրտից է առաջանում, և ամբողջ մարմնի ցնցուելով-դողով է սկսում, որից յետոյ սկսում է սաստիկ տաքութիւն, հիւանդը դժուար է շնչում, յաճախ կողերում ծակոց է զգում, հազում է, սաստիկ ծարաւ է զգում, կաշուի չորութիւն է ունենում։ Ճգնաժամը մեծ մասամբ լինում է 7-9 օրը. բայց պատահում է հիւանդը 3-7-9-11-13 և այլն օրերումն էլ առողջանում է։

ՈՐՈՎԱՅՆԱՈՐԴԵՐԻ (глисты).—Գլխի պտոյտ, որձկալ, փսխում է, սրտի գդալի տակը ցաւ է զգում, ախորժակը պակաս է լինում, աչքի բիբերը լայնանում են. արտաթորման ժամանակ մէկ, մէկ, որդերի նշաններ են երևում, երբեմն պորտի մօտերքում ցաւ, արիւնը դէպի գլուխը տալու նշաններ և գլխի ցաւ։

ՔՈՍ (чесотка).—Վարակիչ է, առաջանում է կաշուի մէջ մտած մանր կենդանիներից-պարազիտներից (клещей) նշաններ են՝ սաստիկ քոր, մատներում բշտիկներ՝ որոնք տարածւում են մարմնի այլ մասերում և քորելուց պատռելով ժահրոտում և կեղկեղքւում։

ՍՏԱՄՈՔՍԻ ՍՈՒՐ ԲՈՐԲՈՔՈՒՄ.—Ջղային դրութիւն, ստամոքսում սաստիկ ցաւ, փսխում, սաստիկ այրում սրտագդալի տակ, ծարաւ, սառը քրտինք. ցաւի կսկծի ուշագնացութիւն, ուժից ընկնել և արիւնը գլուխը տալու նշաններ։

ՄԻՋԱՆՑՔԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ.—(պատճառը միզարանում քա-

ղերի զանուելն է կամ փորի ներքի մասերի մրսելը): Մխղարանում սաստիկ ցաւ է զգում, երբ փորի ներքի մասերին ձեռքով թեթև սեղմում ես. շուտ շուտ միզելու հարկաւորութիւն, մէզը հոսում է կաթիլ-կաթիլ և կարմրագոյն է լինում, ջղային դրութիւն. երբեմն ձգձգում մեզարանում, այրւող և կսկծալի ցաւ՝ որը մինչև գոտկատեղն է հասնում:

ԹՈՒԹՔ ԿԱՄ ԹԹԱԽՏ (гиморрой).—առաջանում է, հաստ աղիքի միջի երակի լայնանալուց: Այդ երակը պարբերաբար արիւնով լցւում է և ուռչում, հիւանդն ունենում է գլխացաւ, փորը կապ է լինում, ծոծրակում և գոտկատեղում տաքութիւն. ուժից ընկնում է, երբեմն էլ սաստիկ արիւնահոսութիւն է լինում, տաքութիւն և ծակոց (արիւնատար երակների բորբոքման միջոցին):

ԿԱՐՄԻՐ ՔԱՄԻ (Рожа)—Նշանները, պաղդուն կարմրութիւն, ուռուցք, կաշուի այրել և մորթու քոր, դող, երբեմն բորբոքումն տեղը փոխում է և բշտիկներով ծածկւում և եթէ հիւանդութիւնը գլխի վրայ է, գլուխը ցաւում է, հիւանդը չի քնում և զառանցում է, (գէլն է տալիս) և երեսը ծածկւում է:

ՄԼՈՔՈՐ ԿԱՄ ԵՂՋԱՏԵՆԴ (крапивная лихорадка).—Թեթև դողացնում է, տաքութիւն է տալի. մարմնի վրայ էլ քոր եկող բշտիկներ են յայտնւում օղակների նման:

ԽՌՈՒԿ ԿԱՄ ԻՆԱՂ (крупъ).– Թեթև հազ (ցերեկով) և ձայնն էլ աննշան, երեկոները հիւանդը նեղանում է և դժուար է շնչում, կոկորդը կուչ է գալիս, ունեցած հազը խռխռոցի է փոխւում, տենդը աւելանում է, ձայնը խռպոտւում, երեսը կապտում, ձեռքերը և ոտները սառչում, իսկ կոկորդում զգում է սաստիկ ցաւ և դժուարաշնչութիւն:

ԿԱՐՄՐՈՒԿ.—Ջղային դրութիւն, ուժից ընկնում է, տաքութիւն, գլխի ցաւ, 2-3 օրից երեսի և մարմնի այլ տեղերում փոքր բշտիկներ են յայտնւում (մանր պզուկներ), որոնք



քանի գնում են աւելանում են, (այս պզուկները մանր փայտօջլի կծած տեղի-բծերի նման են լինում): Բծերը տեղ տեղ հաւաքուած են լինում երեք օրից յետոյ այդ պզուկները անհետանում են և կաշին սկսում է թեփոտուել, երբեմն հիւանդը սաստիկ գրգռուած դրութեան մէջ է լինում և չի քնում:

ԽՕԼԵՐԱՅԻ ՆՇԱՆՆԵՐ. —Ամենից առաջ շուտ-շուտ և առատութեամբ լուծում է մոխրագոյն, իսկ վերջը բոլորովին անգոյն բրնձի ապուրի նման հեղանիւթ (շատ անգամ մի ժամուայ մէջ 10-15 անգամ), փորի մէջ առանց ցաւի համարեայ գալարում և ղրղռոց է զգում: Ջրուեթը պակասում է, ամեն 2-3 ժամը մի անգամ, իսկ 2-3 անգամ լուծելուց յետոյ էլ փսխում է կերակրի մնացորդները, յետոյ կըտրած կաթի նման հեղանիւթ. այսպէս շարունակւում է ամեն 10-15 րոպէից յետոյ, սկզբումը լինում է հեշտ և գնալով աւելի դժուարութեամբ և չարչարանքով: Վրան տխրութիւն և սրտի դզալի տակ ցաւ է գալիս: Փորի լուծելուց և փսխելուց յայտնւում են կծկումները՝ որ խօլերայի ամենավտանգաւոր նշաններիցն է, որը առաւելապէս ոտի ձկնամներում՝ շատ անգամ էլ ձեռքերում և ոտներում: Մարմինը սառչում և է կապտում: Հիւանդութեան սկզբումը տաքութիւն չէ լինում, այլ ընդհակառակը այս նշաններից յետոյ էլ տաքութեան աստիճանը ցածրանում էլ է, ծարաւութիւն է զգում, զգացողութիւնն էլ մինչև մահը պահպանւում է: Այս նշանները մինչև 8-24 ժամ տեւում են. բայց պատահում է որ 2-3 օրից էլ առաջ մեռնում են, երբ զարկերակը սկսում է զօրեղանալ և գնալով արագանում է (մինչև 90-100 զարկ), արեան՝ գլուխը հոսելու նշաններ են երեւում, շատ անգամ և հարբնքի—տիֆի նման էլ խլութիւն: Առողջանալը 4-10 օր է տեւում: Հաստատ դեղ սրա դէմ գտնուած չէ դեռ: Շտապիր բժիշկ հասցնել:

ԾԱՂԻԿ. —Ջղային դրութիւն, վրա չորրորդ օրը մարմնի

վրայ պալարներ են յայտնւում, երեսի, վզի, կրծքի և անդամների վրա դուս տուածները պլպլում են, իսկ յետոյ գոյնը փոխում են—որոնք 8-9 օրից յետոյ թարախ բռնում չորանում և վայր թափւում, տեղը կարմիր բիծ և փոս տեղ թողնելով: Հիւանդի դրութիւնը 11 օրից յետոյ միայն լաւանում է: Եթէ պալարները արիւնով են լինում լցուած, ասում են սև—ծաղիկ, որի ժամանակ և պատահում է ջղերի քայքայումն, անհանգստութիւն և զառանցում է (դէլի է տալիս):

ՔՈՒԹԵՇ.—Սաստիկ տաքութիւն, երբեմն զառանցում է, փսխում է, կուլ տալը դժուարանում է, բորբոքումն ստանում է, վզում գեղձնիկներ, ուռուցք և ցաւ ներսից կոկորդում, 2-3 օրից յետոյ վզի, կրծքի, երբեմն էլ երեսի և այլ մասերում յայտնւում են մանիշակագոյն կլոր բծերով պզուկներ. 6-7 օրից այս բոլոր երևոյթները սկսում են թուլանալ, և մարմնի մորթը—կաշին թեփոտում է. երկու շաբաթ շարունակ թերթի և ալրի թողի նման կաշին թափւում է, (այս ժամանակ մրսելուց պէտք է զգուշանալ), ունենում է կաշու տաքութիւն, ջղային դրութիւն. արիւնը գլուխը տալու նշաններ են երևում, շատ անգամ էլ դուրս տուածը անհետանում է:

ԿԱՊՈՅՏ-ՀԱԶ ԿԱՄ ԱՔԼՕՐԱՀԱԶ (коклюшъ).—Սա ցնցող և խեղդող հազ է, որը ամեն անգամ ոյժով կրկնւում է: Նշաններն են. մի քանի անգամ իրար ետևից հազեցնում է, շունչը կրկնելով. երբեմն անդադար դրութեան մէջ է լինում, հազի սկզբին, փսխում է, անզգայ կերպիւ ջրուկթում և արտաթորում է, խուխն էլ առատ և կպչուն է լինում, սրտի ցնցումով (конвульсами) խեղդուածի նման հեկեկում է, երբեմն շունչը կտրելու հետ ամբողջ մարմնին անզգայութիւն և հիւանդը գիտակցութիւնը կորցնում է:

ՕՁԻ ԿԾԱԾԸ ԻՄԱՆԱԼՈՒ ՆՇԱՆՆԵՐ, ԹՈՒՆԱՒՈՐ Է ԹԷ ՈՉ.—Թունաւոր օձի խայթուածը նրանով է զանազանւում,



որ թողնում է երկու ատամներից խայթուածի հետք. իսկ անթոյն օձինը կլոռումէջ ձևով վէրք: Խայթուած տեղում սաստիկ ցաւ է զգում, վէրքի շուրջը ուռուցք և ծիրանագոյն բծեր կամ բշտիկներ է յայտնւում. սառսուռ և ծարաւ է զգում, դժուարաշնչութիւն, դժուար միզում, փսխում, դողացնում է և արեան թունաւորութեան այլ և այլ նշաններ են երևում:

---

## II. ԴԵՂԵՐ, ՄԻՋՈՑՆԵՐ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԳՈՐՏՆՈՒԿՆԵՐ ԿԱՄ ԵԼՈՒՆԴՆԵՐ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ.—Գորտնուկները ոչնչացնելու մի քանի հասարակ միջոցներ կան, օրինակ ինչպիսիք են մագնեզիայ, որը գորտնուկ ունեցողին տալիս են ամեն առաւօտ և երեկոյ մի-մի թէյի գդալ, որից ելունդները իրենք իրենց են ոչնչանում կամ հեշտութեամբ սրբւում են. չորս շաբաթ մագնեզեայ գործածելուց յետոյ ելունդի հետքն անգամ չէ մնում: Միևնոյն միջոցն երբեմն օգնում է և ոտի կոշտի (մազոլի) ոչնչացման. կամ թէ չէ առնում են թաց կ..ղնու կամ ընկուզենու չիւ, դնում են կրակի մէջ այնպէս, որ մի քառորդ մասը կրակից դուրս մնայ, երբ դրսի տաքացրած կողմից սկսում է փրփուր թորել, մատով առնում են այդ հիւթը և ամեն օր քսում ելունդին մինչև որ կ'անցնի: Ելունդի ոչնչացնելու համար ելունդի վրայ դնում են նաև ծեծած սխտոր խողի եղով: «Մշակ»

ՍՈՒՐԱՎԱՆԴ-ՍԿՕՐԲՈՒԹ ԵՒ ԱՅԼ ՓԱՅԾԵՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԴԷՄ ԴԵՂ.—Խմէլը (хмель) ութ մսխալ, մի շտոփի երկու երրորդականի չափ ջրի մէջ խաշել և ընդունել օրը երեք անգամ, երեք բաժակ:

ՋՐԱՎԱԽՈՒԹԵԱՆ (водобоязни) ԴԷՄ ԴԵՂ.—Անցեալ թուա-



† ՄԱՅՐԱՊԵՏ ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՖԱՅԵԱՆ



կաններում փորձով հաստատուեցաւ, որ „Alisma plontag", ռուսերէն „Луковичная растенія" բոյսը, հաստատ բժշկում է մարդկանց և կենդանիներին կատաղա. կենդանիների խածնելուց կամ վիրաւորուելուց: Այս բոյսը բնում է անտառներում, որի արմատը կտոր-կտոր անելով չորացնում են արևի տակ և յետոյ բարակ փոշի են դարձնում: Հասակով հիւանդին $2^1/_2$ մսխալ իւղով հացի վրայ քսած պէտք է տալ, իսկ երեխին մէկ մսխալ: Կենդանիներին էլ նայած նոցա մեծութեան չափին, օրինակ ձիերին և կովերին 8—8 մսխալ: Երեք անգամ պիտի ընդունել տալ. եթէ փսխեց, պէտք է շարունակել:

ԵՂՈՒՆԳԻ ՓԹԵԼՈՒ (ногтоѣда) ԴԷՄ ՄԻՋՈՑ.—Հէնց որ մատը սկսեց ուռչել, անմիջապէս վեր առ թարմ ձուն և ծակ բաց անելով հիւանդ մատը մէջը դիր. մի գիշեր ձուի մէջ ձեռքդ պնդացրած պահիր: Առաւօտեան տաքութիւնից ձուն կ'եփուի և ձեռքը կ'առողջանայ:

ԹՈՒԹԵՇԻ ԺԱՄԱՆԱԿ ՕԳՏԱԿԱՐ ԴԵՂ.—Ամենից առաջ հիւանդից առողջներին պէտք է հեռացնել, եթէ սաստիկ տաքութիւն ունի, օրը 2—3 անգամ 2—4 գրան ցորենաքաշ խինին են տալիս, իսկ մեծերին 5—6 գրան: Եթէ հիւանդը իրան շատ թոյլ է զգում, պէտք է ամեն երկու ժամը միանգամ տալ մի-մի փոքր բաժակ լաւ գինի:

ԿԼՏԻԿԻ ԴԷՄ ԴԵՂ.—Կլտիկի առաջն առնելու համար հարկաւոր է մի քանի կաթիլ քացախ խառնել ջրի հետ և խմել կամ շաքար պահել բերանում և թքի հետ կամաց-կամաց կուլ տալ: Շատ անգամ կլտիկի առաջն է առնում նաև ռունգներն ու բերանը բռնել:

ՀԱՐԲՈՒԽԻՑ ԱԶԱՏՈՒԵԼՈՒ ԱՄԵՆԱՀԵՇՏ ՄԻՋՈՑ.—Պէտք է վեր առնել բարձր-երկար և նեղ բաժակ, մինչև կէսը եռացրած ջուր լցնել մէջը և թէյի մի դգալ քափուր (камфора) ածել վրէն, այնուհետև պէտք է թղթից մի ձագար շինել և լայն կողմով բաժակի երեսը ծածկելով, քիթը մօտեցնել նեղ կող-

մին և հոտ քաշել տաս վայրկեանի չափ։ Եթէ այդ առաջին անգամից չ՚օգնէ, հինգ ժամից յետոյ նորից պէտք է կրկնել։

ԱՔԼՈՐԱՀԱԶԻ ԿԱՄ ԿԱՊՈՅՏ-ՀԱԶԻ (коклюшъ) ԴԷՄ ԴԵՂ.— Աքլորահազով բռնուած երեխաների ոտի կրունկներին գիշերները ջարդած սխտոր են քսում՝ որ շատ է օգնում։

ԽՈԼԵՐԱՅԻ ԵՒ ՏԻՖԻ—ՀԱՐԻՆՔԻ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻՆ ՈՉՆՉԱՑՆՈՂ ՆԻՒԹԵՐ.—Բժիշկ Րիսկի քննութիւնից երևում է, որ կարմիր և սպիտակ գինիքը ոչ թէ միայն իրանց մէջը ունին այնպիսի յատկութիւն, որ հարինքի—տիֆի և խոլերայի բակտերիաների աճելը արգելում է կամ ընդհատում՝ այլ և յայտնի և որոշեալ ժամանակամիջոցում ներգործելով (կէս ժամից մինչև 14 ժամը) մինչև անգամ նրանց սպանում են։ Սրանից աւելի բակտերիաների վրայ ներգործում են կովի և այծի նոր կթած կաթը։ Ֆրէյդէնրէյխի քննութիւնը ցոյց է տալիս, որ նոր կթած կաթի մէջ խոլերայի բակտերիաները մի ժամուայ ընթացքում ոչնչանում են։ Իսկ հարինքի—տիֆի բակտերիաները 24 ժամից։ Այծի նոր կթած կաթի մէջ այս բակտերիաները հինգ ժամուայ մէջ են ոչնչանում։ Բայց, օրինակ չորս օրուայ հին կաթը, նմանապէս և մինչև 35 աստիճան տաքացրած կաթը չունի բակտերիաներ ոչնչացնելու յատկութիւն։

ԾՆՆԴԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՐԿԱՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ.—Յայտնի մանկաբարձ բժիշկ Աղէքսանդր Դիւնը, ծննդկաններին խորհուրդ չէ տալիս, որ ծնելուց ազատուելուց յետոյ մէջքի վրայ պառկեն, նրա համար, առաջին որ զաւակատունը յետ է քաշւում և այսպէսով արգելում է ծնելուց յետոյ տեղի ունեցող սովորական հոսումը և երկրորդ որ զաւակատան անգքում գտնուած դուրս թափուելու մանրիկների չփուելուց, կարող է պատահել, որ քաղցկեղային բորբոքումն առաջանայ (гнилостная восполенія)։ Սրա համար բժիշկ Դիւնը աւելի պատշաճ է գտնում, որ մանուկի աշխարհ գալուն պէս երեսի վրայ



պառկել (ничкомъ), որպէս զի երեխայի—ընկերքի դուրս գալը շուտանայ։ Ընկերքի դուրս գալուց յետոյ կարելի է պառկել երկու կողքերի վրայ, միայն թէ ոչ երկար ժամանակ, այլ (շուտ-շուտ շուռումուռ գալով) դիրքը փոխելով։ Իսկ միւս օրն թէև կարելի է նստել, բայց ոչ մէջքի վրայ պառկել։

ՋՐԱՀԵՂՁՆԵՐԻՆ ՈՒՇՔԻ ԲԵՐԵԼՈՒ ԱՄԵՆԱՆՈՐ ԳՏՆՈՒԱԾ ՀՆԱՐՔ.—Ֆրանսիացի յայտնի բժիշկ Լաբորդը ջրահեղձներին ուշքի բերելու համար հետևեալ միջոցն է առաջարկում։ Պէտք է հիւանդին կռացած բռնել և լեզուն բերանից հանել. հանելուց յետոյ, լեզուից բռնել և այնպէս քաշելով ձգձգել՝ որ շնչառութեան զարկի չափով լինի։ Այսպիսով խեղդուածից կ՚սկսի ջուր թափուել և կամաց-կամաց ուշքի կ՚գայ։ Պէտք է զգոյշ լինել որ չ՚լինի թէ լեզուն ամուր ձգելուց փնասուի։ Այս նշանաւոր հնարքով, բացի Լաբորդի իր արած փորձերից „Орловск. Вѣстникъ" լրագրի ասելով, Մցինսկի գաւառի Ալէշնայեա գիւղում պատահել է այդ միջոցով ջրահեղձին ուշքի բերելու հետևեալ դէպքը։ Խեղդուել էր գիւղացի Սաֆրոնը. նրան երբ ջրից հանեցին, կեանքի նշոյլ չկար՝ այնպէս որ ժողովածները վճռել էին ձեռք վերցնել Սաֆրոնից համարելով նրան մեռած։ Այդ ժամանակ ժողովականների միջից առաջ եկաւ գիւղացիներից մինը—Պետրուխինը և ասաց որ մի գաղտնիք գիտէ, որի միջոցով Սաֆրոնին կարելի է կեանքի բերել. այդ գաղտնիքը նա Մցինսկում բժիշկներից էր լսել)։ Պետրուխինին թոյլ տուին գործադրել իւր միջոցը և նա բաց անելով Սաֆրոնի բերանը, բռնեց լեզուից, դուրս հանեց բերանից և սկսեց միջոց առ միջոց ձգձգել և գլուխը դէպի վար բռնելով հրամայեց որ Սաֆրոնի փորը մգլն-մերսեն։ Այդպիսով Սաֆրոնի փորից ջուր հոսեց և հինգ րոպէից յետ՝ խեղդուածն սկսեց շարժուել, աչքերը բաց անել։ Աննկարագրելի եղաւ շրջապատողների ուրախութիւնը։ Դրանից յետ Սաֆրոնին անկողնում պառկացրին և սկսեցին մարմինը—լաշը

հարել։ Այդ միջոցը բոլորովին ուշքի բերեց Սաֆրոնին։

ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈԼԵՐԱՅԻ ԴԷՄ.—1) Եռացած ջուր խմել։ 2) Բանջարեղէններ և պտուղներ առանց եռացրած ջրի մէջ ածելուց չուտել։ 3) Փորը տաք պահել։ 4) Առաւօտեանները անօթի տնից չդուրս գալ։ 5) Կանոնաւոր կեանք վարել և աւելորդ բաներից հեռանալ։ 6) Ոգելից ըմպելիքներ չափով ընդունել 7) Ամեն տեղ մաքուր պահել։ 8) Բազմամարդ տեղերից և հիւանդներից խոյս տալ։

ԴԻՖՏԷՐԻՏԻ ԴԷՄ ՄԻՋՈՑ.—Վարշավայում հրատարակուող լեհական թերթերի ասելով, Բուժէ բժիշկը երկար ժամանակ է, որ դիֆտերիտի դէմ գործ է ածում լաւ ռոմ։ Բուժէի դիտողութիւններից երևում է, որ ռոմի գործածութիւնը շատ լաւ հետևանքներ է ունենում. և նա իւր բժշկական գործունէութեան միջոցին, ոչ մի դիֆտերիտով հիւանդ չէ ունեցել որ ռոմով բժշկած չլինի։ Նա այդ նպատակով տալիս է մի տարեկան երեխային, ամեն մի երկու ժամից յետոյ թէյի կէս դգալ ռոմ, 2-4 տարեկանին մի թէյի դգալ, իսկ 12 տարեկանից վեր՝ սեղանի մի դգալ ռոմ։ Հիւանդները նշանակեալ չափով ռոմ խմելուց յետոյ՝ հանգիստ քնում են և աստիճանաբար առողջանում են։

---

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԽՈՐՀՈՒՐԴ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ։

Որքան կարելի է շուտ հիւանդների մօտից առողջներին հեռացնել։ Արտաթորելու և փսխելու համար ամաններ դնել, որոնց մէջը ածած լինի կարբոլեան թթու կամ սնդկի աղով (сулема) ջուր։ Սպիտակեղէնները և ամեն տեսակ շորեր փաթաթեղէններ, որոնք գործածութեան մէջ են և հիւանդը նրանց դիպչում է, առաջուց պէտք է եռացնել ջրում և յետոյ լուանալ, մահճակալը, անկողինը և միւս իրեղէնները

## XIII. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

---

ԿՈՒՐԾՔՆ ՈՒ ԹՈՔԵՐՆ ՈՒԺԵՂԱՑՆԵԼՈՒ ԱՄԵՆԱՀԱՍԱՐԱԿ ՀՆԱՐՔ.—Այս հնարքը գտել է մի անգլիացի բժիշկ, որը փորձով իսկ համոզուել է որ, մարդ երբ սագի փետրից շինած խողովակով օդ է ներս շնչում, այդպիսով աւելի մեծ քանակութիւն թթուածին է կուլ տալիս։ Եւ այսպիսով ոչ թէ միայն շնչառութեան գործարաններն են պնդանում, այլ և մարսողութիւնը թեթևանում ու մարմնի բնական ոյժն աւելանում է։ Այս փորձերը գործադրուել են կատաղի հազով տանջուող հիւանդացած երեխաների վրայ էլ, որոնք այս միջոցի օգնութեամբ աստիճանաբար ազատուեցան։

ԿԱՊՈՅՏ ԳՈՅՆՈՎ ՏՈՂԱԾ ՏԵՏՐԱԿՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ.—Այս խնդիրը Պարիզի առողջապահական ընկերութիւնը քննեց՝ և փորձեց կապոյտ գոյնով տողած տետրակները (որը առհասարակ ինչպէս էլ նկատուած է) որոնք կարճատեսութեան պատճառ են լինում։ Եթէ նոր դիտողութիւնները – փորձերը և այդ բանը հաստատեցին, այն ժամանակ տողած կապոյտ գոյնով տետրակների գործածութիւնը կ՚վերանայ։

ԿԱՆԱՆՑ ԿԱԹՆԻ ԱՌԱՏԱՑՆԵԼՈՒ ԵՒ ՊԱԿԱՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ.—Կանայք, եթէ չեն ցանկանում որ իրանց կաթը բոլորովին կ՚տրուի, անանուխ (պլանա) չ՚պէտք է ուտեն։

ՄԱՐԴՈՒՍ ԱՄԵՆԱՍՆՆԴԱՐԱՐ ԿԵՐԱԿՈՒՐԸ.—Առողջ մարդուն 24 ժամուայ ընթացքում կանոնաւոր սնունդի համար անհրաժեշտ է 118 գրամ սպիտակուց 56 գրամ իւղային մա-

ներ և 500 գր. ոսնձային նիւթեր: Այս չափերը փորձերով ստուգուած է և պէտք է ածուում ներկայ գիտութեամբ համար կերակրեղէն նիւթերը համեմատելու:

Եթէ այս չափը համեմատենք սև հացի քիմիական բաղադրութեան հետ, այն ժամանակ կ'յայտնուի որ նա սննդաբարութեան կանոնաւոր չափից բաւականին պակաս է. Նրանում 37 մասը ածխաջուր է 3-ն իւղ և 302 ոսլինձ: Իսկ ոսպը (чечевица) բոլորովին ուրիշ բաղադրութիւն ունի: Ոսպի մի գրուանքան իւր մէջ բաղադրում է 168 գր. ածխաջուր 32 գր. իւղային մասնիկներ և 483 գր. ոսլինձ: Այս հիման վրայ, բուսական կերակուրներից ամենասննդարարը ոսպն է. որը ոչ թէ առանց միսսելու կարելի է ընդունել՝ այլ նա և կազմուածքին աւելացնելու յատկութեամբ, հացին կարող է փոխարինել:

---

## ԵՐՋԱՆԻԿ ԼԻՆԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ։

—Ոտով շատ ման արի։
—Գիշերը 7 ժամ քնիր։
—Զարթնեցիր թէ չէ՝ վե՛ր կաց։
Վերկացար թէ չէ՝ աշխատի՛ր։
Երբ քաղցած ես ա՛յն ժամանակ հաց կեր, միայն հանդարտ.
—Լաւ ծարաւած ժամանակդ խմիր։
—Երբ հարկաւոր լինի՝ ա՛յն ժամանակ խօսիր և մտքիդ անցածի կէսն ասա։
—Այն խոստացիր, ինչ որ կարող ես կատարել։
—Այն բանը միայն գրիր, ինչին կարող ես ստորագրել։
—Մի՛ մոռանար երբէք, որ ուրիշները կարող են իրանց յոյսը քեզ վերայ դնել. իսկ դու երբէք յոյսդ ուրիշների վերայ չդնես։
—Փողն իր արժէքից աւելի մի յարգիր, յիշիր, որ փողը լաւ ծառայ է, բայց վատ տէր։
—Ուրիշներին եղբայրներդ համարիր, ու այնպէս վարուիր նրանց հետ։
—Յարգիր ուրիշի կարծիքն ու համոզմունքը։

## ՏԱՍՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԼՈՂԱՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ։

1) Զպէտք է լողանալ հոգեկան յուզմունքների ժամանակ 2) Գլուխը ցաւելիս։ 3) Անքուն անցկացրած գիշերներից և չափազանց գրգռմունքից յետոյ՝ մինչև որ մի քանի հանգիստ ժամեր չանցնին։ 4) Չլողանալ նոյնպէս կուշտ ճաշ-նախաճաշիկ կամ ընթրիք ուտելուց և մանաւանդ աւելորդ խմելուց յետոյ։ 5) Լողացողը գնալիս և գալիս չ'պիտի շտապէ։ 6) Որտեղ լողանալու ես, այն տեղի-գետի խորութիւնը և ընթացութիւնն իմացիր։ 7) Հենց որ հանուես՝ քրտնած տեղերդ լաւ չորացրու և անմիջապէս ջուրը մտիր։ 8) Ջուրը մտար թէ չէ՝ ամբողջ մարմնով ծածկուիր։ 9) Ով որ բաւականին ուժեղ չէ, նա լողանալիս ջրումը երկար չի պիտի մնայ։ 10) Լողանալուն պէս ամբողջ մարմինը պիտի սաւանով չորացնել և շփել. արեան շրջապտոյտը զօրեղացնելու համար էլ պէտք է, շտապել շուտ հագնուել և աշխատել մանգալ։

# XIV. ԴԱՏԱՐԱՆԱԿԱՆ

## Ա. (Ժամանակամիջոցներ)

### ա) ՔՐԵԱԿԱՆ ՅԱՆՑԱՆՔՆԵՐԻ (ՈՒԳԱԼՈՎՆԻ) ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ։

Մ է կ օ ր.- Ժամանակամիջոց դատաստանական ամէն կարգադրութեանց դէմ՝ անբաւականութիւն յայտնելու և դատաւորին քննութիւն անելուց հեռացնելու համար։

Ե ր ե ք օ ր. —Հաշտարար դատաւորի յանցաւորին վճռի պատճէն տալը։

Ե օ թ ն օ ր.—Մասնաւոր (частная жалоба) գանգատ հաշտարար դատաւորի դէմ, բողոք չընդունելու համար, նահանգական դատարանին պաշտպան ընտրելու մասին յայտարարութիւն կամ վկաների ցուցակը յղացնելու համար և երբ այս գործերի մասին դատարանը մերժի յայտարարութիւն տալու համար։

Ե ր կ ո ւ շ ա բ ա թ.—դատարանական ակտերի վճիռների դէմ բողոք (ապելլացիա) և պատասխան (ОТЗЫВЪ) տալու համար վկաների և գիտակ անձինքների կոչմից յայտարարութիւն՝ դատարանին չներկայանալու արդարանալու ապացոյցների և մասնաւոր գանգատ նահանգական դատարանի որոշման դէմ։

### բ) ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ (ԳՐԱԺԴԱՆՍԿԻ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ)։

Մ է կ օ ր.—Հաշտարար դատաւորին՝ գրաւոր ապացոյցներ ներկայացնելը (քննութեան օրը՝ մինչև ժամի 2-ը)

Ե ր ե ք օ ր. Հաշտարար դատաւորի վճռի պատճէն տալու համար, հեռացնելը (ОТВОДЪ) գիտակ մարդկանց, և դատաւորներին գործի քննելուց հեռացնելու մասին գանգատուելը (եթէ ինքը բարեկամ է կամ շահ ունի)։

Ե օ թ ն օ ր.—Հաշտարար դատաւորների որոշման դէմ մասնաւոր գանգատ տալը, դատարանին՝ գործի պակաս յանձնուածների հասցնելը։ Վճռման ապացոյցի ներկայացնելը և նրանց հերքելը. գանգատ՝ որոշելու թէ գործի քննութիւնը ո՞ր դատարանին է վերաբերում. պարտքը հատուցանելու համար ամենակարճ ժամանակամիջոցը՝ շարժական գոյքը վաճառելու համար. աճուրդով առած գոյքի գինը լրացնելու, և աճուրդի անկանոնութեան դէմ գանգատ տալու համար։

Ե ր կ ո ւ շ ա բ ա թ.—Հաշտարար դատարանի և նահանգական դատ. բացակայական (заочн. рѣш.) վճռի դէմ պատասխան (ОТЗЫВЪ) տալը (եթէ գործը կարճացրած դատաւարութեամբ է ընթացել). հերքումն և հակապատասխանելը։ Ապելլացիայի խնդիրքը վերականգնելու համար նահանգական դատարանին մասնաւոր գանգատ տալը, մասնաւոր գանգատների դէմ բացատրութիւն ներկայացնելը. դատարանական ծախքերի պահանջելու մասին խնդիրք տալը (դատարանի վճիռը յայտնած օրից հաշուելով)։

Մ է կ ա մ ի ս.—Հաշտարար դատաւորի վճռի դէմ ապելլացիայ և կասացիայ տալը և այն գործերի մասին գանգատուելը՝ որոնք նահանգական դատարանում կարճացրած կարգով են քննուել. ամենակարճ ժամանակամիջոցը պարտքը հատուցանելու համար մինչև 500 ր. արժողութեամբ կալուածքի ծախելը։

Վեց շաբաթ.—Ամենավերջին ժամանակամիջոցը՝ շարժական գոյքերի վաճառման, պարտապանների և պարտատէրերի մէջ վճռած գումարի համաձայնութեամբ բաժանելը, անձնական կալանաւորման մասին որոշման ուժի կորցնելը։

Ե ր կ ո ւ ա մ ի ս.—Պարտքերը ինքնա-

կամ վճարելու.—երբ հասուցումն անշարժ կալուածներից է լինելու. ամենակարճ ժամանակամիջոցը 500 ից մինչև 10 հազար րուբլի արժեցող կալուածքը վաճառելու:

Երեք ամիս.—Ամենաերկար ժամանակամիջոցը մուրհակի հաշիւ ներկայացնելու, ամենակարճ ժամանակամիջոց 10 հազարանոց կալուածքը վաճառելու. վարչական անձանց կողմից հասած վնասների պահանջելը:

Չորս ամիս.—Դատարանական պայտի և նահանգական դատարանների վճռի դէմ՝ ապելացիայ տալը, եթէ գործը ընդհանուր կարգով է կատարուել). պարտապան-պատասխանատուի՝ արտասահման գտնուած դատարանին ներկայանալը՝ միջնորդ դատարանի վճռի կատարման համար:

Վեց ամիս.—Հասցէն անյայտ պարտապանների ներկայանալու, մեռածների մասին գանգատուելու (վարչական-պաշտօնական անձինքների կողմից հասած) և ժառանգների յայտնուելու համար:

Մէկ տարի.—Ապօրինի ծնունդի գործի զարթեցնելը, (եթէ ամուսինը Ռուսաստանումն է գտնւում). ժառանգութեան բաժանման վճռի փոխելու մասին ապելացիա տալը:

Երկու տարի.—Այնպիսի գործերի զարթեցնելու մասին՝ ինչպիսին է կնոջ ամուսնոյ արտասահման գտնուելը՝ ամենավերջին ժամանակամիջոցը մեծ ակսելու քաղաքացիական անձնական իրաւունքների, ամուսնական կապով:

## Բ. ՀԱՍԱՐԱԿ ԿՏԱԿ ԳՐԵԼՈՒ ՕՐԻՆԱԿ

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: 1893 թ. Մարտի ամսի 20-ին ք. Տփխիս: Ես ՝ի ներքոյ սորա ստորագրողս Տփխիսայ քաղաքացի Յովհաննէս Սանփանեան Նիկողոսեանս գտնուելով երկանութեամբ ուշիմ և մտքով առողջ, բոլոր իմ ունեցած ամեն տեսակ անշարժ և շարժական կալքերս-գոյքերս, ինչից էլ որ նրանք բաղկացած լինին, իմ մահուանից յետոյ կտակում եմ Գրիգոր Գէորգեան Պօղոսեանին, լիովին նրա սեպհականութիւն: Այս կտակը կտակողի Յովհաննէս Սանփանեան Նիկողոսեանի՝ որը մտքով առողջ և երևակայութեամբ ուշիմ էր, նրա արտասանած խօսքերով գրեցի՝ ես Սիմէօն Կարապետեան Սահակեան: Այս կտակիս ստորագրեցի Յովհաննէս Սանփանեան Նիկողոսեան: Այս կտակը գրեց Սիմէօն Կարապետեան Սահակեանը՝ կտակող Յովհաննէս Սանփանեան Նիկողոսեանի արտասանած խօսքերով, որը մտքով և յիշողութեամբ ուշիմ և առողջ էր և ինքն՝ կտակողն իր խնդրան ձեռքով ստորագրեց, որով ստորագրեմ Դաւիթ Գէորգեան Միրզայեանց: *) Վկայեմ այս կտակը գրելիս, Գարեգին Սողոմոնեան Լևոնեան:

*) 1) Բաւական է և երկու վկան՝ եթէ նրանցից մէկը կտակողի խոստովանահայրն է, մինչև անգամ ո՛չ միայն այն դէպքում, երբ կտակողն ինքն է ստորագրել, այլ՝ եթէ ամբողջ կտակը ինքն է գրել: 2) Վկաներ և կտակի գրողներ չեն կարող լինել նրանք՝ ա) որոնց օգտին արուածէ կտակը. բ) բարեկամները մինչև չորրորդ-պորտը, եթէ կտակը ուղղակի ժառանգների օգտին է: գ) կտակով նշանակուած (ապեկուններ), կտակակատարները և հոգաբարձուները. դ) նրանք որոնք օրէնքով կտակ չեն կարող անել. ե) նրանք բոլորը՝ որոնց վկայութիւնները քաղաքացիական օրէնքով ընդունելի չեն. զ) գիր չիմացողները և անչափահասները. է) Չերնիգովեան և Պօլտավայի նահանգներում կանայք: 3) Եթէ կտակը մի քանի թերթերից է բաղկացած, ստորագրողները ամեն թերթերի վերջին պիտի ստորագրեն: Տ. Աշխ.

# XV. ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ամէն պատանի 16 տարին լրանալուց յետոյ և ոչ ուշ դեկտեմբերի 31-ին այն տարուայ, երբ նրա քսան տարին կը լրանայ, պարտաւոր է գրուել և ստանալ վկայական, որ նա գրուած է զինուորական ծառայութեան մէջ: Զինուորական ծառայութեան գրուելու համար պէտք է յայտարարութիւն տալ այն զինուորական վարչութեան՝ որին պատկանում է ինքն իւր բնակութեան տեղի համաձայն ուր ինքն է ապրում, նորա հետ պէտք է ներկայացնէ 1) մետրիկական վկայական, 2) որտեղ է բնակվում նորա վկայականը. 3) ուսման վկայական և 4) իւր ընտանիքի դրութեան մասին ծանօթութիւն:

Ով որ զինուորական ծառայութեան գրուելու համակից կ՚անցնի և երբ նորա հասակակիցների վիճակահանութիւնը կ՚սկսուի, չի տեղեկացնի զինուորական վարչութեան՝ նորան առանց վիճակահանութեան կ՚ենթարկեն զինուորական ծառայութեան:

Ով որ կամենում է որ ժամանակ տան ուսումն աւարտելու, նա զինուորական վարչութեան պէտք է ներկայացնէ յայտարարութիւն և ուսումնարանի վարչութիւնից էլ ուսումն շարունակելու վկայական:

Զինուորական ծառայութիւնից ազատում են այն անձինք, որոնք մարմնի կազմուածքի պակասութիւն ունին կամ այնպիսի մի հիւանդութիւն, որ խանգարում է զինուորական ծառայութեան ենթարկուելու: Զինուորական ծառայութեան մէջ վերջնական մարմնի չափը ընդունուած է 2 արշին և $2^1/_2$ վերշոկ: Որոնք բաւարար չեն աճել և ունին այնպիսի հիւանդութիւն, որ բոլորովին չի ազատի զինուորական ծառայութիւնից կամ դեռ ևս ունին մարմնի թուլութիւն—առողջանալու համար նոցա տրւում է մի տարի ժամանակ: Եթէ մի տարուց յետոյ, նրանք դարձեալ թոյլ կը լինեն, նրանց կը նշանակեն ծառայութեան մէջ երկրորդ տարի, իսկ եթէ երկրորդ տարին ևս անպէտք կը ճանաչուին զինուորական ծառայութեան համար, այն ժամանակ նրանք ազատւում են ծառայութիւնից, որի համար և ստանում են վկայական:

Ընտանեկան դրութեան նկատմամբ սահմանուած է արտօնութիւններ երեք կարգի.



† ԴԻՒՅԱԶՆ ԳԵՆ. ԱՐ. ՏԷՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆ



Առաջին կարգ։ 1) Երբ միայն մի որդի է աշխատանքի ընդունակ, որի հայրը աշխատանքի ընդունակ չէ կամ մայրը այրի է։ 2) Երբ աշխատանքի մի եղբայրն է միայն ընդունակ, որը ունի մի կամ մի քանի որբ եղբայրներ և քոյրեր, 3) Երբ միայն մի թոռն է աշխատանքի ընդունակ, որի պապը կամ տատը աշխատանքի ընդունակ որդի չունին։ 4) Երբ ընտանիքի մէջ միայն մի որդի է, եթէ մինչև անգամ ունենայ աշխատանքի ընդունակ հայր և 5) Երբ ապօրինի ծնուած զաւակի հոգացողութեան ներքոյ է աշխատանքի ընդունակ ուրիշ որդիք չունեցող մայրը կամ քոյրը, կամ թէ աշխատանքի անընդունակ եղբայրը։

Երկրորդ կարգ։ Երբ միայն մի որդի է աշխատանքի ընդունակ որի հայրը նոյնպէս աշխատանքի ընդունակ է, բայց որը ունի մէկ կամ մի քանի աշխատանքի անընդունակ եղբայրներ, որոնց տարիքը 18 տարուց ցածր է.

Երրորդ կարգ։ Երբ պատանուն տարիքով անմիջապէս հետևում է այն եղբայրը, որը զինուորակոչով խրկական ծառայութեան մէջ է գտնւում կամ զրկել է այդ ծառայութեան մէջ և կամ անյայտ կերպով կորել է պատերազմում։

Ընտանիքի մէջ աշխատանքի ընդունակ համարում են 18 տարեկանից մինչև յիսուն և հինգ տարեկան անձինք, բացի հետևեալներից. 1) Նոքա, որոնք կատարելապէս անկարող են աշխատել կաղմութեան կամ հիւանդոտ լինելու պատճառով. 2) աքսորուածները. 3) երեք տարուց աւելի բացակայութեան մէջ եղողները և 4) նոքա որ զինուորակոչով գտնւում են իբրև զինուոր ցամաքային զօրքի կամ նաւատորմի խրկական ծառայութեան մէջ։

Օտար զաւակները որոնք որդեգրուել են մինչև 10 տարեկան և անհարազատ զաւակներ խորթ մօրը, զինուորական ծառայութեան վերաբերմամբ համարւում են հարազատ որդիք։

Ընտանեկան դրութեան արտօնութիւնների իրաւունք ունեցող անձինք ծառայութեան մէջ են նշանակւում միմիայն այն դէպքում, երբ նորակոչ զօրքը լրացնելու համար բաւական չեն լինի վիճակահանութեան կոչուած միւս մարդիկ։

Առաջին կամ երկրորդ կարգի արտօնութեան իրաւունք ունեցող անձինք զրկւում են այդ իրաւունքից, եթէ հօր կամ մօր, պապի կամ տատի աւելորդ ընտանիքի համար չեն հոգում։

# XVI. ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ

## ՕՏԱՐԵՐԿՐԵԱՅ ԴՐԱՄՆԵՐԻ ՋԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ

(ռուբլու, կոպէկի, ֆրանկի եւ սանտիմի հաշուով)։

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պարսից ղրանն | հաւասար է— | ֆրան. | 41 | սանտ | — | ր. | $10\frac{1}{4}$ | կոպ. | |
| » թուման | » ոսկի | 11 | ֆ. | 86 | » | 2 | » | $96\frac{1}{2}$ | » |
| » բանաբաթ | » արծաթ | 1 | » | 4 | » | — | » | 26 | » |
| » սահիբղրան | » ոսկի | 2 | » | 8 | » | — | » | 52 | » |
| Տաճկաց փարա | » մետաղ | — | » | $\frac{1}{2}$ | » | — | » | $\frac{1}{8}$ | » |
| » պիաստր | » արծաթ | — | » | 22 | » | — | » | $5\frac{1}{2}$ | » |
| » լիրա | » ոսկի | 22 | » | 78 | » | 5 | » | $69\frac{1}{2}$ | » |
| Աւստրիայ դուկատ | » ոսկի | 11 | » | 85 | » | 2 | » | $96\frac{1}{4}$ | » |
| » կրեյցեր | » մետաղ | — | » | 2 | » | — | » | $—\frac{1}{2}$ | » |
| » ֆլորին | » արծաթ | 2 | » | 47 | » | — | » | $61\frac{3}{4}$ | » |
| Գերմանիայի պֆէնիգ. | » մետաղ | — | » | 1 | » | — | » | $—\frac{1}{4}$ | » |
| » մարկա | » արծաթ | 1 | » | 11 | » | — | » | $27\frac{3}{4}$ | » |
| » » | » ոսկի | 1 | » | 22 | » | — | » | $30\frac{3}{4}$ | » |
| » կրոնա | » ոսկի | 12 | » | 35 | » | 3 | » | $8\frac{3}{4}$ | » |
| Անգլիա շիլինգ | » արծաթ | 1 | » | 16 | » | — | » | 29 | » |
| » ֆունտ-ստերլինգ | ոսկի | 25 | » | 22 | » | 6 | » | $30\frac{1}{2}$ | » |
| » պեննի | » արծաթ | — | » | 10 | » | — | » | $2\frac{1}{2}$ | » |
| Ֆրանցիա սանտիմ | » մետաղ | — | » | 1 | » | — | » | $\frac{1}{4}$ | » |
| » ֆրանկ | » արծաթ | 1 | » | — | » | — | » | 25— | » |
| Իտալիա լիրա | » արծաթ | 1 | » | — | » | — | » | 25— | » |
| » չենտեզիմօ | » արծաթ | — | » | 1 | » | — | » | $—\frac{1}{4}$ | » |
| Իսպանիա էսկուդօ | » արծաթ | 2 | » | 60 | » | — | » | 65— | » |
| » րէալ | » արծաթ | — | » | 23 | » | — | » | $5\frac{3}{4}$ | » |
| » դուրօ | » ոսկի | 5 | » | 19 | » | 1 | » | $29\frac{3}{4}$ | » |
| » դուբլօն | հաւաս. ոսկի | 20 | ֆ. | 39 | սանտ. | 5 | ր. | $9\frac{3}{4}$ | կոպ. |
| Շվէց. Նորվէգիա և Դան. | կրօնա | 1 | » | 33 | » | — | » | $33\frac{1}{4}$ | » |
| » » | » մետաղ | — | » | 1 | » | — | » | $—\frac{1}{4}$ | » |
| Հոլանդիա դուկատ | » ոսկի | 11 | » | 83 | » | 2 | » | $95\frac{3}{4}$ | » |
| » րիխստալեր | » արծաթ | 5 | » | 25 | » | 1 | » | $31\frac{1}{4}$ | » |
| » ցէնտ | » մետաղ | — | » | 2 | » | — | » | $—\frac{1}{2}$ | » |
| Միացեալ Նահանգ. դոլ. | արծաթ | — | » | 50 | » | — | » | $12\frac{1}{2}$ | » |
| » իգլ | » ոսկի | 51 | » | 83 | » | 12 | » | $95\frac{3}{4}$ | » |
| » ցէնտ | » մետաղ | — | » | 5 | » | — | » | $1\frac{1}{4}$ | » |
| Բրազիլիա միլրէյս | » արծաթ | 2 | » | 60 | » | — | » | 65— | » |
| » » | » ոսկի | 8 | » | 23 | » | 1 | » | $70\frac{3}{4}$ | » |
| » րէյս | » մետաղ | — | » | $\frac{1}{4}$ | » | — | » | $—\frac{1}{16}$ | » |
| Հնդկաստան ռուփիա | » արծաթ | 2 | » | 38 | » | — | » | $59\frac{1}{2}$ | » |
| » մօգուր | » ոսկի | 36 | » | 83 | » | 9 | » | $20\frac{1}{4}$ | » |
| Ճապոնիա իէն (վաճառականական) | | 5 | » | 39 | » | 1 | » | $34\frac{3}{4}$ | » |
| » իէն | » մետաղ | 5 | » | 16 | » | — | » | $1\frac{1}{22}$ | » |
| Ռումինիա լէի | » արծաթ | 1 | » | — | » | — | » | 25— | » |
| » բանի | » մետաղ | — | » | 1 | » | — | » | $—\frac{1}{4}$ | » |
| Բուլղարիա լէվ | » արծաթ | 1 | » | — | » | — | » | 25— | » |
| Սերբիա լէվ | » արծաթ | 1 | » | — | » | — | » | 25— | » |
| » փարա | » մետաղ | — | » | 1 | » | — | » | $—\frac{1}{4}$ | » |
| Յունաստան դրախմ | » արծաթ | 1 | » | — | » | — | » | 25— | » |
| » լեպտա | » մետաղ | — | » | 1 | » | — | » | $—\frac{1}{4}$ | » |
| Եգիպտոս լիրա | » ոսկի | 25 | » | 61 | » | 6 | » | $40\frac{1}{4}$ | » |
| » պիաստր | » արծաթ | — | » | 26 | » | — | » | $6\frac{1}{2}$ | » |
| Բուխարա տինգա | » արծաթ | — | » | 73 | » | — | » | $18\frac{1}{4}$ | » |
| » տիլլա | » ոսկի | 15 | » | 37 | » | 3 | » | $84\frac{1}{2}$ | » |

Ֆրանսիայի ֆրանկը (դրամը) նաև գործ են ածում չորս տէրութեանց մէջ (Շվէյցարիայի, Բելգիայի, Լուկսէնբուրգի և Մօնակօում)։



† Ռափայէլ Պատկանեան վախճ. 22 օգոստ. 1892 թ.

# XVII. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

1) ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԴԻՐՔԸ ԵՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԹԻՒԸ։

| Քաղաքները | (սաժեն). Բարձր. ծ. մակեր. | Բնակիչ. թիւը։ |
|---|---|---|
| Թիֆլիս | 2400 | 105,024 |
| Բագու | — | 45,679 |
| Եկատերինոդար | — | 39,610 |
| Ստավրոպոլ | 2000 | 37,017 |
| Վլադիկավկազ | 2346 | 33,981 |
| Շամախի | 2230 | 28,545 |
| Մայկոպ | — | 27,945 |
| Եյսկ | — | 27,915 |
| Շուշի | 5076 | 26,806 |
| Նուխի | 2454 | 25,757 |
| Ալեքսանդրապոլ | 5079 | 22,670 |
| Գանձակ | 1446 | 20,294 |
| Քութայիս | — | 20,227 |
| Երևան | 3229 | 14,555 |
| Դերբենդ | — | 14,185 |
| Ղուբա | 1988 | 13,730 |
| Թեմրիւկ | 244 | 13,656 |
| Ախալցխա | 3376 | 23,265 |
| Մոզդոկ | 465 | 12,989 |
| Բաթում | — | 11,878 |
| Սղնախ | 2593 | 10.069 |
| Ղզլար | — | 8,778 |
| Նովոռոսիյսկ | — | 8,304 |
| Գէորգիևսկ | 1032 | 8,290 |
| Թելաւ | 2420 | 8,014 |
| Անապա | — | 7,604 |
| Նոր-Բայազէտ | — | 7,120 |
| Հին-Նախիջևան | 2949 | 6,911 |
| Գրոզնա | 419 | 6,214 |
| Գորի | 2006 | 5,383 |
| Փոթի | — | 4,785 |
| Արմավիր | — | 4,634 |
| Ախալքալակ | 5545 | 4,303 |
| Պետրովսկ | — | 4,000 |
| Թեմիր-Խան-Շուրա | — | 3,356 |
| Կաղզուան | 4968 | 3,298 |
| Թաման | 444 | 3,231 |
| Ղարս | 6173 | 3,137 |
| Դուշէթ | — | 2,041 |
| Սուխում | — | 1,279 |
| Արդահան | 6058 | 844 |

2) ԿՈՎԿԱՍԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԸ։

| Տեղերի անունները։ | Հիւս. լայն. | Արև. երկայն. |
|---|---|---|
| Ալեքսանդրապոլ | 40°47 | 61°29 |
| Ախալցխա | 41 38 | 60 38 |
| Ախալքալակ | 41 25 | 60 08 |
| Բագու | 40 .2 | 67 29 |
| Բորժոմ | 41 50 | 61 02 |
| Գանձակ | 40 40 | 64 01 |
| Գէորգիևսկ | 44 08 | 61 08 |
| Գորի | 41 59 | 61 46 |
| Գրոզնա | 43 19 | 63 21 |
| Դիլիջան | 40 44 | 62 32 |
| Դերբենդ | 42 03 | 65 57 |
| Դուշէթ | 42 05 | 62 21 |
| Եկատերինոդար | 45 01 | 56 37 |
| Երևան | 40 10 | 62 10 |
| Էջմիածին | 40 09 | 61 57 |
| Թելաւ | 41 55 | 63 08 |
| Թեմիր-Խան-Շուրա | 42 49 | 64 46 |
| Թիֆլիս | 41 43 | 62 27 |
| Լենքորան | 38 45 | 66 31 |
| Կազբէկ | 42 39 | 62 18 |
| Կողբ | 40 03 | 61 20 |
| Ղզլար | 43 51 | 64 22 |
| Ղուբա | 41 21 | 66 10 |
| Մոզդոկ | 43 44 | 62 19 |
| Հին-Նախիջևան | 39 12 | 63 04 |
| Նոր-Բայազէտ | 40 20 | 62 47 |
| Նովոռոսիյսկ | 44 42 | 55 26 |
| Նուխի | 41 12 | 64 51 |
| Շամախի | 40 37 | 66 18 |
| Շուշի | 49 49 | 65 24 |
| Պետրովսկ | 42 59 | 65 09 |
| Պեատիգորսկ | 44 02 | 60 45 |
| Սևան | 40 33 | 62 50 |
| Սղնախ | 41 36 | 63 34 |
| Ստավրոպոլ | 45 03 | 59 38 |
| Վլադիկավկազ | 43 01 | 62 21 |
| Փոթի | 42 08 | 59 19 |
| Քութայիս | 42 16 | 60 22 |
| Օրդուբաթ | 38 54 | 63 41 |



3) ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՄԻ ՔԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ։

ԹԻՖԼԻԶԻՑ

| | Վերստ |
|---|---|
| Աբասթուման | 210 |
| Ագուլիս | 422 |
| Ալեքսանդրապոլ | 243 |
| Արդահան | 387 |
| Ասխաբադ | 1308 |
| Ախալցխա | 186 |
| Արխանգելսկ | 3248 |
| Ախալքալակ | 248 |
| Բագու | 517 |
| Բլագովեշչենսկ | 8766 |
| Բուխարա | 1853 |
| Գանձակ | 182 |
| Եկատերինոդար (Դար.) | 809 |
| Բաթում | 330 |
| Բորժոմ | 140 |
| Գորի | 71 |
| Գրոզնա | 190 |
| Դերբենդ | 599 |
| Եյսկ | 851 |
| Եկատերինբուրգ | 1417 |
| Երևան | 264 |
| Եակուտսկ | 9264 |
| Զաքաթալա | 192 |
| Էջմիածին | 282 |
| Թելաւ | 93 |
| Լենքորան | 569 |
| Կաղզուան | 415 |
| Հին-Նախիջևան | 422 |
| Հաշտարխան | 2735 |
| Ղզլար | 441 |
| Ղուբա | 674 |
| Մասիս | 334 |
| Մոզդոկ | 288 |
| Նոր-Բայազէտ | 231 |
| Նուխի | 160 |
| Շամախի | 398 |
| Թեմիր-Խան-Շուրա | 456 |
| Ժիտոմիր | 1988 |
| Իրկուտսկ | 6520 |
| Լիւբլին | 2414 |
| Խարկով | 1393 |
| Խերսոն | 1508 |
| Կալիշ | 2863 |
| Կամենեց-Պոդոլսկ | 2179 |
| Ղարս | 346 |
| Կիև | 1859 |
| Կոստրոմա | 2372 |
| Կովնո | 2437 |
| Կուրսկ | 522 |
| Հելսինգֆորս | 3041 |
| Ղազան | 2340 |
| Մոսկվա | 2016 |
| Նիժնի-Նովգորոդ | 2262 |
| Նիկոլաեւսկ | 10,510 |
| Նովգորոդ | 2529 |
| Նովո-Չերքասկ | 902 |
| Նոր-Նախիջևան | 941 |
| Ուրալսկ | 2490 |
| Ուֆա | 2622 |
| Չերնիգով | 1830 |
| Պենզա | 1945 |
| Պետերբուրգ | 2623 |
| Պերմ | 2917 |
| Պոլտավա | 1494 |
| Պսկով | 2578 |
| Ռեվել | 2223 |
| Շուշի | 345 |
| Պետրովսկ | 499 |
| Պեատիգորսկ | 407 |
| Ջուղա | 461 |
| Սալեան | 443 |
| Սևան | 200 |
| Սղնախ | 100 |
| Տաթև | 433 |
| Փոթի | 286 |
| Ռեազան | 1834 |
| Ռիգա | 2701 |
| Ռոստով (Դոնի վերայ) | 939 |
| Սամարա | 2128 |
| Սարատով | 1716 |
| Սիմբիրսկ | 2134 |
| Սիմֆերոպոլ | 1222 |
| Սմոլենսկ | 2207 |
| Ստավրոպոլ | 550 |
| Վարշավա | 2584 |
| Վիլնո | 2536 |
| Վլադիկավկազ | 201 |
| Վլադիմիր | 2200 |
| Վլադիվոստոկ | 10,644 |
| Վորոնեժ | 1464 |
| Տաշքենդ | 2492 |
| Տուլա | 1910 |
| Քիշինև | 1870 |
| Քութայիս | 208 |
| Օմսկ | 4065 |
| Օրենբուրգ | 2522 |
| Օրել | 1762 |

# XVIII. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ



## Ա. ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեւ եւ Ազով. ծովի վերայ վճարում են

| | II. կարգը | III. կարգը |
|---|---|---|
| Ռոստովից՝ Տագանրոգ, Կերչ և Տեմրիւկ | 6ր. 25 կ. | 3ր. 80 կ. |

ԽՐԻՄԻ ԵՒ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾԸ

| | | |
|---|---|---|
| Օդեսայից Եւպատոր. | 9 ր. | 3 ր 20կ. |
| » Եալթա | 11 » | 3 » 60 |
| » Քերչ | 15 » | 5 » 20 |
| » Փոթի | 30 » | 9 » 60 |
| » Բաթում | 30 ր 50կ. | 9 » 80 |

ԿԱՍՊԵԱՆ ԾՈՎԻ ՎԵՐԱՅ.

| | | |
|---|---|---|
| Հաշտարխ. Պետրով. | 11 ր. | 5 ր. 59կ. |
| Ալէքսանդր. | 10 » | 5 » |
| » Դարբանդ | 13 » | 6 » 0 |
| » Բաքու | 19 » | 7 » 70 |
| Ալէքսանդրով. մինչև Պետրով. | 15 ր. 8կ. | |
| Նիժնից Ցարիցին | 16 ր. 70կ. | 7 » 95 |
| » Հաշտարխ. | 20 » — | 9 » 80 |

(Ամերիկայի սիստեմի շոգենաւերով մինչև Հաշտարխան 15 ր. 65 կ. 7 ր. 50)

ԴԷՊԻ ԱՐԵՒԵԼՔ.

Օդեսայից / Սեւաստոպոլից } Կ. Պոլիս 15ր. 4կ.

ՕԴԵՍԱՅԻՑ ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ

| | | |
|---|---|---|
| Պորտսայիդ (Եգիպտ.) | 54ր. 50կ. | 15ր 25կ. |
| « Ադէն (Արաբ.) | 220 | 51 » — |
| » Սինգապ. (Հնդկ.) | 443 | 108 » — |
| » Շանխայ (Չինաս.) | 551 | 139 » — |
| » Նագաս. (Չինաս) | 574 | 144 » — |
| » Խանկոյ և Վլադիվ. | 600 | 150 » — |

Շոգենաւային ընկերութիւնը Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսոյ մէջ:

Բաթումից գնում է.

Երեքշաբթի օրերը: Այս օրից յետոյ ժ. 4-ին ուղիղ գծով մտնում է Սուխումի և Նովորոսիյսկի նաւահանգիստները:

Հինգշաբթի օրերը: Այս օրուայ ժամը 4-ին ուղիղ գծով, Նովորոսիյսկի և Կերչի վերայով:

Շաբաթ օրերը: Երեկոյեան 8 ժամին, շրջանառու ընթացքով (обходн. рейсъ) բոլոր նաւահանգիստները պտտելով:

Երկուշաբթի օրերը: Երեկոյեան 7 ժ. արտասահմանեան գնացքով դէպի Կ. Պոլիս:

Պոլսից Բաթում

Երկուշաբթի առաւօտը, Օդեսայից ուղիղ գծով, Կերչի և Սուխումի վերայով:

Չորեքշաբթի առաւօտը, Օդեսայից ուղիղ գծով Կերչի և Նովորոսիյսկի վերայով:

Ուրբաթ երեկոյեան, Օդեսայից շրջանառու ընթացքով:

Կիրակի օրերը, առաւօտ. Կ. Պոլսից:

Փոթիից գնում է Բաթում.

Երեքշաբթի առաւօտը ժամը 9-ին:
Ուրբաթ երեկոյեան կէս գիշերին:
Շաբաթ առաւօտեան ժամը 9-ին:

Բաթումից գնում է Փոթի.

Չորեքշաբթի և կիրակի օրերը, նաւը Փոթիից գալուց յետոյ:

Բացի այդ ամեն շաբաթ Օդեսայից գալիս են և գնում Փոթի երթևեկող ապրանքակիր և մարդակիր նաւեր:





## Բ. ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԸ

Թիֆլիսից

1. ԴԷՊԻ ԵՐԵՒԱՆ (264 վ.)

| | |
|---|---|
| Աղստաֆա, երկաթուղի | 88½ վ. |
| Դիլիջան | 72¾ » |
| Սեմենովկա | 18¾ » |
| Ելենովկա | 21½ » |
| Ներքին Ախտա | 16½ » |
| Սուխոյա Ֆոնտանկա | 12 » |
| Էյլար | 19½ » |
| ԵՐԵՒԱՆ | 15 » |

2. ԴԷՊԻ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՈԼ (224¾ վ.)

| | |
|---|---|
| Աղստաֆա | 88½ » |
| Նոր-Աղստաֆինսկայա | 9 » |
| Ուզունթալա | 13½ վ. |
| Քարավանսարա | 17¼ » |
| Դիլիջան | 14½ » |
| Համզաչիման | 18 » |
| Մեծ-Ղարաքիլիսա | 19¼ » |
| Համամլու | 21 » |
| Աղբուլաղ | 20 » |
| ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՈԼ | 19¾ » |

3. ԴԷՊԻ ՕՐԴՈՒԲԱԴ (508 վ.)

| | |
|---|---|
| ԵՐԵՒԱՆ | 264 » |
| Ագամզալու | 13 » |
| Ղամարլու | 15 » |
| Դավալու | 18¾ » |
| Սադարակ | 18¼ » |
| Բաշ-Նորաշէն | 24½ » |
| Թոպրաք | 10 » |
| Ղվրախ | 19 » |
| Բէխուր գիւղի | 20 » |
| ՆԱԽԻՋԵՒԱՆ | 21 » |
| Ալինջաչայ | 44¼ » |
| Ջուլֆա (Ջուլֆա) | 15 » |
| Ազա | 46¾ » |
| ՕՐԴՈՒԲԱԴ | 17¾ » |

4. ԴԷՊԻ ԹԵԼԱՒ (163¾ վ.)

| | |
|---|---|
| Ցրտմի | 10½ վ. |
| Վազիանի | 13¾ » |
| Սարթիճալա | 20 » |
| Կակաբեթի | 21 » |
| Կադլէթի | 13½ վ. |
| ՍՂՆԱԽ | 21½ » |
| Բակուրցիխէ | 15½ » |
| Մուկուզանի | 17 » |
| Ախասրի | 14 » |
| ԹԵԼԱՒ | 16 » |

5. ԴԷՊԻ ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ (200½ վ.)

| | |
|---|---|
| Մցխեթ | 20½ վ. |
| Ծիլկանի | 14¾ » |
| ԴՈՒՇԵԹ | 17¼ » |
| Անանուր | 16¼ » |
| Փասանաուր | 21 » |
| Մլեթ | 18½ » |
| Գուդաուր | 14½ » |
| Կոբի | 16 » |
| Կազբէկ | 17¼ » |
| Լարս | 14½ » |
| Բալթա | 17¼ » |
| ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ | 12¼ » |

Թիֆլիսից և Վլադիկավկազից գնում են

Ա. Հինգ հոգու տեղ ունեցող կառքը (կարետա) առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլէթում և միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում Վլադիկավկազ—Թիֆլիս:

Բ. Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը երեկոյեան ժամը 3-ին և առանց Ճանապարհին գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում Վլադիկավկազ Թիֆլիս:

Ա. Հինգ հոգու տեղ ունեցող կառքը (կարետա) առաւօտեան ժամը 9-ին և գիշերելով Մլէթ կայարանում, միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում Թիֆլիս Վլադիկավկազ:

Բ. Վեց հոգու տեղ ունեցող կառքը (օմնիբուս) երեկոյեան ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում Թիֆլիս - Վլադիկավկազ:

# XIX. ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

## ՄԱՐԴՈՒՍ ԿԵԱՆՔԻ ՍԱՀՄԱՆԸ

Ա. ԱԳԱՊԵԱՆ.

### I.

Ժողովրդի մէջ այն տեսակ հաւատալիք է պտտում թէ խոտերի մէջ մի դեղ կայ, որ եթէ գտնուեց, կ'վերանայ մահը։ Այս հաւատալիքն իսկապէս հետեւանք է բնածին մտատանջման, որի ազդեցութեան տակ մարդ այն մտքին է գալի թէ իրեն նման արարած պիտի նոյն վախճանը չունենայ, ինչ վախճան որ ունի ճանճը, գարնան ծաղիկը, արեւնարբու վագրը..

Շատ հին հաւատալիք է այս հաւատալիքը։ Այն օրից, երբ մարդ առաջին անգամ ականատես եղաւ իւր նմանի, մերձաւորի անդարձ անկման, այն օրից, երբ ծաղկափթիթ ծառը մերկացաւ՝ թափելով իւր թարշամած տերեւները,—սկսեց մարդը. սեւ թախիծը թանձր վարագոյրով պատեց նրա սիրտը, եւ նա անճարացած կախ ընկաւ այն յոյսի փեշից՝ թէ գալու է մի օր, ժամանակ, երբ աւելի գիտուն մարդիկ մահուան դէմ դեղ են գտնելու եւ յաւիտեան ազատելու են իրան աշխարհիս երեսին։

Բայց մարդ յաւիտենականութեան հետ ուզում է երիտասարդ էլ լինել։ Նրա սիրտը կոտրւում է, գոյնը շրջւում, երբ աչքի տակով անմեղ նայում է ատամնազուրկ, ծնկները թուլացած, մէջքը կորացած, աչքի լոյսը թռած ծերունու վրայ...։ Ինչպէս նոր շինութեան պատի մէջ երեւացող ճաքը նրա ամրութիւնը կասկածանքի տակ է դնում, այդպէս էլ առաջին անգամ մարդուս մազերի մէջ սպիտակին տուող երկու մազ խախտում են նրա հաւատը դէպի իւր սեպհական



մարմնի շէնքը։ Այդ երկու հատիկ մազը թէեւ լուռ, բայց ազդու ոյժով յայտարարում են, թէ կեանքն արդէն մօտեցել է ծերութեան սահմանին, եւ որ այն՝ ինչոր երիտասարդութեան հասակին էր պատկանում, տեղի պիտի տայ այսուհետեւ մի պաղ ու թոյլ կեանքի, որը, հետզհետէ զիջողութիւններ անելով մահուան, իւր իշխանութեան տակ էլ բան չի թողնելու, այնքան՝ մինչ դադարելու է գոյութիւն ունենալուց։

Ծերութեան հասակին օգնութիւն հասնելու մտքով էր, որ միջնադարեան ալքիմիկոսները, մութ խորշերում կուչ եկած, աղօտ լոյսի ներքոյ՝ խորհրդաւոր ուշադրութեամբ բոյսերից հեղուկներ էին մզում ու զանազան խառնուրդներ անում, յուսալով որ այդ խառնուրդներից մինն ու մինը գուցէ կարող լինի դիմադրել մահուան՝ յաւիտեան հալածելով նրան մարդու երեսից...բայց, մահուան դէմ դեղ գտնելու փոխարէն, ուրիշ բաներ գտան։ Անցաւ նրանց դարը։ Ալքիմիկոսների գործը շարունակեցին միւսները, միայն՝ այլ ճանապարհով։ Երեւացին միտքեր, մարդիկ, որոնց ճակատից բարձրահայեաց լեռնակատարների նման մռայլը չէր անցնում։ Այս մարդիկ տրամաբանական ոչինչ կապ չգտնելով կեանքի սկզբնաւորութեան ու նրա վախճանի մէջ, բարկացած բողոքներ էին արձակում,—ում դէմ՝ իրենք էլ չգիտէին։—«Եթէ մարդս ծնուել է ապրելու համար, ինչու՞ համար է մահը, իսկ թէ մահ կար՝ ծնուելն ինչու՞ համար էր»,—բացագանչում էին նրանք, յարձակուելով բնութեան «ըստ երեւոյթին» անիմաստ կարգադրութեան վրայ։ Բայց այդ մարդկանց բողոքները միայն բողոք մնացին, եւ Վօլտերի պէս մարդը, կեանքի մասին դատողութիւններ տալով, աւելի եւ՛ս շփոթուեց՝ կորցնելով գլուխն այդ հարցի մէջ։ Սակայն, չնայելով ոչ մի տեղից պատասխանի ձայն չէր գալի՝ չվհատուեցին մարդիկ, չհանգստացան,—այն աստիճան մօտ է հարցը մեր օրերին։ Այժմ երեւում է հարցն ուրիշ կերպ են դրել։ Ընդունելով, որ մահը բնու-

թեան անփոփոխելի, մշտական օրէնքներից մինն է, չէ կարելի արդեօք—հարցնում են—ճշգիւ որոշել կեանքի սահմանը, այսինքն՝ ապացուցանել՝ որ մարդուս վիճակուած է իւր ծննդեան օրից այսքան, կամ այնքան ժամանակ ապրել, որից դէնն, ինչ միջոցների էլ նա դիմի, չէ կարող իւր կեանքին մի բան աւելացնել, որովհետև կենսական ոյժը միայն մի որոշ ժամանակի համար կարող է բաւականանալ:

Ահա այս հետաքրքիր հարցովն է զբաղուել իւր հրապարակական դասախօսութեան մէջ Ղազանի կայսերական համալսարանի պրօֆէսսոր Դօհել, որի դասախօսութիւնն առանձին բրօշիւրով էլ լոյս է տեսել այս վերջերում «Предѣлъ человѣческой жизни» խորագրով, որպիսին և կրում է մեր յօդուածի վերնագիրը:

## II.

Նախ քան մարդուս կեանքի սահման որոշելն ասենք 1) ինչ բան է կեանքը և 2)՝ ինչ օրէնքների է ենթարկուած նա:

Ֆրանսիացի ականաւոր բնաբան Բերնարդ կեանքի համար ասում է. «la vie c'est la mort»—կեանքը հենց ինքը մահն է, և՝ հակառակ. «la mort c'est la vie»—մահը նոյն է կեանք: Թէև կեանքի մասին տուած այս տեսակ որոշումն իսկապէս որոշում չի կարելի համարել, ասում է Դօհել, բայց չպիտի մոռանալ, որ նա յայտնի և խորին նշանակութիւն ունի, ըստ որում ցոյց է տալիս, թէ ինչ առընչութիւն կայ կեանքի ու մահուան մէջ և՝ հակառակ:

Դրա նման մի որոշում էլ Շիլլերն է անում.« Քանդւում է հինը, փոխւում է ժամանակը և աւերակների վրայ նոր կեանք է ծլում», ասում է նա: Մի ուրիշ—ֆրանսիացի բնաբան՝ հանճարեղ Բիշան այսպէս է ասում. «la vie est l'ensemble des fonctions, qui resistent a' la mort»—այսինքն՝ կեանքն այն տեսակ կատարումների ամբողջութիւն է, որոնք



գործում են ընդդէմ մահուան: Վերջապէս անգլիացի փիլիսոփա Սպենսերը պնդում է, թէ կեանքը կենդանաբանական կազմուածքի ներքին յարաբերութիւնների կողմից արտաքին յարաբերութիւնների հետ մշտական յարմարուելու մի գործունէութիւն է, որ դա մշտապէս երկու հակադարձ կողմերից իրար դէմ գործող սկզբունքների մշտնջենական մի կռիւ է: Այս բոլոր որոշումներից հասարակ լեզուով այն է դուրս գալիս, թէ մի ոյժ ներսից պահպանում է կազմուածքը, այն ինչ ուրիշ, մի հակառակ ոյժ, դրսից աշխատում է քայքայել նրան:

Ի՞նչ ասել կուզի, որ այս տեսակ որոշումներով—բացատրութիւններով կեանքի էութիւնը, նրա ինչ լինելը դեռ ևս չի պարզւում, և մեզ համար տակաւին մութն է մնում, թէ այն ինչ իրար հակառակ ոյժեր են և ինչու նրանք իրար դէմ գործելիս պիտի լինին: Այս հարցի իսկական պատասխանն այն ժամանակ կգտնուի, երբ արևի պէս պայծառ կերևի մեր առաջ, թէ մարդուս երկրային կեանքի իսկական նպատակն ինչի մէջ է կայանում: Բայց այդ հարցին մինչև այժմ պատասխանող չի եղել և եղած պատասխանները կեանքի միայն մերձաւոր նպատակն են որոշելիս եղել: Հարցի իսկական և միակ պատասխանը գուցէ վերապահուած է մեզանից թանձր խաւարով ծածկուած ապագային. մեզ համար այսքանն էլ է բաւական, ինչ որ կեանքի մասին լսեցինք գիտնականներից: Ուշք դարձնենք միւս հարցի վրայ—ինչ օրէնքների է ենթարկուած կեանքը, ինչպէս է յարատևում նա:

Դօհել կեանքի յարատևութիւնը բացատրելու համար երկու մատչելի օրինակ է բերում:

Գնդակը թնդանօթից նետուելիս յայտնի է, թէ ինչ ոյժով է թռչում: Այդպիսի մի շարժողութիւն գոյացնելու համար անհրաժեշտ է որոշ ոյժ, վառօդի յայտնի քանակութիւն, որ բռնկուելիս կարողանար յայտնի արագութեամբ

շարժողութեան մէջ դցել Թնդանօթի գնդակը։ Այդ տեսակ մի ոյժ ճանապարհին ոչինչ արգելքի չհանդիպելով, պէտք է որ նախկին արագութեամբ յաւիտեան շարժուէր։ Եթէ որ գնդակը թռչելիս հանդիպում է ուրիշ գնդակի կամ առարկայի, զարկուելով նրան, փոփոխութեան է ենթարկում իւր սկզբնական արագութիւնը. կամ բոլորովին դադարում է գնդակի թռիչքը և կամ յայտնի չափով թլանում, բայց դրա փոխարէն արգելառիթ եղող առարկան է սկսում շարժուել նայեած իւր ստացած զարկի ոյժին, այնպէս որ՝ Թնդանօթի շարժուելը կամ մասամբ և կամ ամբողջովին արգելառիթ եղող առարկայի շարժման է փոխարկւում։

Եթէ որ շարժուող գնդակը մի կարգ արգելքների է հանդիպում, որոնք թլացնում են նրա շարժողութիւնը, գնդակը վերջ ի վերջոյ գալիս է առաջուայ խաղաղ դրութեան, իսկ գնդակի թռիչքին արգելք եղող այն մի կարգ առարկաները ընկնում են շարժողութեան մէջ այն ուժով, որպիսին հաղորդւում է նրանց զարկի միջոցով, այնպէս որ Թնդանօթի գնդակի թռիչքին արգելք ինող մասնաւոր ոյժերը եթէ գումարենք, կստանանք այն սկզբնական ոյժը, որ գնդակը Թնդանօթից նետեց։ Եւ այսպէս, թռիչքի արագութիւնն ու նրա յարատեւութիւնը կախուած են ա) սկզբնական շարժողութեան մէջ դցող զարկի ոյժից և 2) շարժման դէմ դրած ոյժի աստիճանից։

## III.

Այս օրինակից երեւում է, ասում է Գօհել, որ կան մի կարգ շարժողութիւններ, որոնց սկզբնապատճառը նոյնպէս շարժողութիւնն է եղել։ Այս օրինակում վառօդի առնիլը (բռնկուելը) առաջացրեց գազերի շարժում, դրանք այժմ գնդակի շարժման, նա էլ իր կողմից թռիչքին արգելք եղող առարկաները դցեց շարժողութեան մէջ. միայն վերջին շարժումը հանգստացրեց



գնդակը։ Եւ այսպէս, գնդակի շարժուելը ունեցաւ ինչպէս սկիզբ, այնպէս էլ վախճան, որն իր կողմից աղբիւր դարձաւ նոր շարժման։

Շարժման և հանգստութեան նմանութիւն կարող են բերել բոյսերի սերմերը, որոնք բարեյաջող հանգամանքներում հանդիպում՝ անդորր դրութիւնից շարժուն դրութեան, գործունէութեան մէջ են ընկնում։ Այդ սերմերն իսկապէս կեանքի պատկերը՝ քնից—մահուանից զարթնելու նշանն են տալիս։ Անդրժելլի փաստերի վկայելով փակուած տեղ դարից աւել մնալուց յետ անգամ ցորնահատիկները աճելու ընդունակութիւնը կորցրած չեն լինում։ Եգիպտական բուրգերում մօտ 4000 տարի մնացող ցորնահատիկները խոնաւ գետնին պահ տալուց յետ կենդանացան և մեր այժմեան ցորնահատիկների նման հասկեր դցեցին, հատիկներ տուին, ու այդ հատիկներն էլ ընդունակ եղան նոր կեանքի պատճառ լինելու։

Այդ տեսակ—երկար դարեր մեռած մնալու և նորից յարութիւն առնելու ընդունակութիւնը մենակ հացահատիկներին չէ տուած. ուրիշ բոյսերի սերմերն էլ ունեն այդ յատկութիւնից։ Մօտ ժամանակներումս—շարունակում է Գօհել—գիտնականների արած փորձերից երեւաց որ, եթէ սորբին կարգի մի տեսակ սարդս—և խեցգետնանման կենդանիներից վերցնես ու այնպէս չորացնես, որ փոշի դառնայ, և այդ դրութեամբ պահես, տարիներ անցնելուց յետ էլ այդ փոշին եթէ թաց անես,—այդ կենդանիներն էլի կըկենդանանան։ Այդ բոլորը ցոյց է տալի որ, թէ բոյսերի սերմերը և թէ վերջիշեալ կենդանիներն օժտուած են մի ինչ որ ոյժով, որ յայտնի դէպքում աչքի չէ երեւում, այն ինչ ուրիշ՝ բարեյաջող հանգամանքում նրա երեւալը հնարաւոր է։ Գիտութեան մէջ այդ ոյժը յայտնի է **յարուենեան ոյժ** անունով (потенціальная энергія)։ Մի ուրիշ տեղ այդ նոյն ոյժը երեւում է շարժման տեսքով. այսպիսի դէպքում ասւում է **շարժման եռանդ** (энергія дви-

жения)․ բացի դրանից մի երրորդ ոյժ էլ է նկատւում, որի զօրութեամբ մի ձև փոխարկւում է ուրիշ ձևի։

Մարդուս կազմուածքն էլ ցորենի հատիկի նման երկու տեսակ զօրութիւն ունի ա) յարութեան ոյժ և բ) շարժման եռանդ։ Մարդուս սաղմը, որ պատած է հազուանկատ փամփուշտիկով, 0,17 միլիմետր մեծութեան է։ Մանրադիտակի տակ հազիւ երևացող այդ սաղմն է կազմում մարդուս կազմուածքի հիմքը. նա իւր մէջ պահած կենդանանալու ոյժ ունի, որ հենց բարեյաջող հանգամանքներ եղան, հանգիստ, մեռած դրութիւնից զարթնելով՝ կենդանի—գործունեայ դրութիւն մըտնելով, կսկսի աճել, մեծանալ հասակով և քաշով։ Այդ շարժումն սկզբում շատ արագ է կատարւում, յետոյ սկսում է դանդաղել. ապա այնպէս է թւում թէ դադարեց։

Այդ շարժողութիւնը վերջը շուռ գալով հակառակ կերպով է գործում՝ այն է՝ սկսում է մարդուս քաշը պակասել, հասակը կարճանալ—մինչև որ վրայ է հասնում ծերութիւնը։

Վիճակագրական տեղեկութիւնների վրայ հիմնուած Quetelet—Քետլէ ասում է, որ արու մանուկի քաշը ծնընդեան րոպէին միջին թւով $6^1/_2$ ֆունտ է կշռում. կեանքի առաջին տարուայ վերջում $18^1/_2$ ֆունտ է դառնում, որ ասել է թէ ծննդից մի տարի յետոյ մանուկի քաշը գրեթէ երեք անգամ աւելանում է։ Երկրորդ տարուայ վերջում մանուկն արդէն 23 ֆ. է քաշում։ Հետաքրքիր երևոյթ է նկատւում. մինչդեռ կեանքի առաջին տարուց յետոյ 12 ֆունտ է աւելանում, կեանքի երկրորդ տարուայ վերջում $4^1/_2$ ֆունտ է աւելանում։ Սակայն աճման այդպէս զօրեղ թլանալը միայն երկրորդ տարուայ վերջն է նկատելի լինում, մինչդեռ նրանից դէնը՝ մինչև սեռական հասակի հասունանալը քաշի աւելանալու մէջ այնքան էլ զօրեղ երերում չի նկատւում, ինչպէս երկրորդ տարուայ վերջն էր։ 12 տարեկան հասակից մինչև 18 տարեկան հասակը քաշը նորից զգալի կերպով սկսում է աւելանալ. և նոյն չափով շա-



րունակւում է մինչև 15—16 տարեկան հասակը. դրանից յետ աւելանալու ոյժն սկսում է պակասել և մարմնի քաշն անփոփոխ մնում է մինչև 40 տարեկան հասակը։

Այդ հասակից արդէն մինչև ծերութեան հասակը սովորական հանգամանքներում նկատելի է լինում մարմնի քաշի պակասիլը։

Ինչ որ քաշի վերաբերութեամբ է նկատուել, նոյնը նկատուել է և հասակի բարձրանալու վերաբերութեամբ։ Նորածին մանուկի երկարութիւնը, նոյն գլխանախանի առնելով, ծընունդի րոպէին 0,55 մետր է լինում։ Տարիների ընթացքում հասակի բարձրանալն այս կարգով է լինում։ Կեանքի առաջին տարուայ վերջը հասակը բարձրանում է 148 միլիմետր. երկրորդ տարուց յետ—93 միլ. երրորդ տարուց յետ—72 միլ. հինգերորդից—60 միլ—տասներորդից—56 միլ. տասնուհինգ տարուց յետ—53 միլ. 18 տարեկան հասակից մինչև 20-րդ տարին—իւրաքանչիւր տարի աւելանում է 18 միլ. 20—25 տ.—1,2 միլ. 25—30 տ.—0,8 միլ. իսկ 30—40 տարեկան հասակը մարմնի բարձրութիւնն անփոփոխ է մնում։ Այնուհետև հակառակ շարժում է նկատւում.—հասակի ժարձրութիւնն սկսում է կարճանալ հետևեալ կարգով՝ 40—50 տ. 10 միլիմետր. 50—60 տ.—35 միլ. 60—70 տ. 16 միլ. 70—80 տ.—10 միլ. 80—90-րդ տարին շատ քիչ փոփոխութիւն է նկատւում։ Ուրեմն՝ ծերութեան հասակում մարդուս հասակի բարձրութիւնից պակասում է 71 միլիմետր, որ քիչ բան չէ, գրեթէ $^1/_4$ ֆուտ է անում։

## IV.

Ինչ է հետևում այս բոլոր փաստերից. այն, ասում է Գօհէլ, որ մարդուս կեանքը սահման ունի։ Նման միտք իւր ժամանակին յայտնել է արդէն հանճարեղներից մինը՝ Իտալացի աշխարհահռչակ գիտնական Գալիլէյը։ Նա ասել է. «եթէ

սովորական մարդի անդամներ ունեցող մի ահագին հսկայ պատկերացնենք, այդ տեսակ հսկայի ոսկորներն անշուշտ պիտի աւելի ամուր նիւթից լինէին թէ չէ՛ այդ հսկան հասարակ մահկանացուից էլ թոյլ պիտի լինի։» Եւ այդպէս. վիճակագրական օրէնքներն ասում են, որ մարդուս կազմուածքի աճմանը սահման կայ դրուած։ Ինչ վերաբերում է խորին ծերութեան՝ մարդուս կեանքի սահմանին—շարունակում է Դօհել—հարցը դեռ ևս գրականապէս չէ վճռուած՝ չնայելով գիտնականները շատ են զբաղուել նրանով։

Էտրուսացիների սրբազան գրքերում մարդուս կեանքի տեւողութիւնը 12 եօթնամեայ շրջանների է բաժանուած, որ մեր հաշուով 84 տարի է անում։ Սօլոնն էլ էր եօթնամեայ շրջաններ ընդունում, միայն յունաց այդ հին իմաստասէրի շրջանները տասնամեակից էին բաղկանում, այնպէս որ Սօլոնի հաշուով մարդուս կեանքի սահմանը 70 տարին է։

Հին եգիպտացիք այն կարծիքի էին, թէ մարդուս սրտի քաշը իւրաքանչիւր տարի երկու մսխալով աւելանում է և թէ՝ այդ տեսակ աճումը շարունակւում է մինչև 50 տարեկան հասակը. այնուհետև սկսում է նոյն չափով պակասել, մինչև որ սիրտը բոլորովին չքանում է։ Հաշուի առնելով սրտի մաշուելու շրջանը (50 տարի), եգիպտացիների ասելուց այն եզրակացութեան կարելի է գալ, թէ մարդ կարող է միայն 100 տարի ապրել։

Կան և այնպիսի գիտնականներ, որոնք ենթադրում են թէ մարդուս կազմուածքի շէնքը ենթարկուած է խիստ մաթեմաթիքական օրէնքների։ Նրանց հաշուով մարդուս կեանքի սահմանը=81 տարուն։

Այդ գիտնականները մարդուս կեանքի ամբողջ տեւողութիւնը երկու շրջանի են բաժանում, որոնցից իւրաքանչիւրի տեւողութիւնը$=3^2=9$. այնպէս որ՝ երկու շրջանների արտադրեալը կլինի $3^2 \times 3^2 = 9 \times 9 = 81$ տարուն։



Ֆրանսիացի յայտնի բնագէտ Բիւֆֆոնի ասելով կեանքի յարատեւութիւնը կարելի է իմանալ կենդանաբանական կազմուածքի աստիճանաբար զարգանալուց. իսկ նոյն ազգի նշանաւոր բնաբան Ֆլուրան, հիմնուելով ոսկորների լիակատար մերուելու (срощеніе) վրայ, մարդուս կեանքի սահմանը 100 տարի է ընդունում, որովհետև այդ գիտնականի ասելով մարդու ոսկորներն իրանց ամրութեան վերջին աստիճանին հասնում են միայն 60 տարեկան հասակում։

Այդպիսով գտել է Ֆլուրան, որ ձիու ոսկորները վերջնականապէս ամրանում են 5-րդ տարուայ վերջը, առիւծինը՝— 4-րդ, շանը՝ 2-րդ,. և այդ հիման վրայ էլ ձին կարող է ապրել 25 տարի, առիւծը—20, շունը—10—12։

## V.

Ֆլուրան, հիմնուելով մի ուրիշ նշանաւոր բնաբան՝ Հալլերի տուած վիճակագրական տեղեկութիւնների վրայ, այլև՝ աչքի առաջ ունենալով թռչունների, ձկների ու կաթնասուների կեանքում պատահած երկարակեցութեան օրինակները, մարդկային կեանքը երկու տեսակի է բաժանում. ա) սովորական և բ) բացառիկ կեանք։ Վերջինս կարող է սովորականից երկու անգամ աւելի տեւել, այսինքն՝ ձգուել մինչև 200 տարին։ Բացի դրանից Ֆլուրան մարդկային հասակը չորս զոյգ շրջանների է բաժանում։ Առաջին մանկութիւնն, այդ գիտնականի ասելով, ծննդեան օրից մինչև 10-դ տարին է հաշւում. երկրորդ մանկութիւն կամ պատանեկութիւնը՝ 10—20-րդ տարին։ Առաջին երիտասարդութիւնը 20—30-րդ տարին է տեւում. երկրորդ երիտասարդութիւնը՝ 30—40-րդ տարին։ Առաջին հասունութեան հասակը 40—55-րդ տարին է տեւում, երկրորդ հասունութեանը՝ 55—70-րդ տարին։ Առաջին ծերութիւնը 70 և 85 տարիների մէջ է, երկրորդ ծերութիւնը 85-րդ տարուց մինչև մահ։

Ֆլուրան այն պատճառով է պատանեկութեան հասակը 20-րդ տարին հասցնում, որ այդ հասակում միայն ոսկորները լիակատար ամրութեան են հասնում ու այդ հասակումն է դադարում մարմնի բարձրութեամբ աճիլը. և երիտասարդութիւնն այն հիման վրայ 40-րդ տարին հասցնում, որ այդ հասակումն է վերջանում մարմնի բովանդակութեամբ աճիլը:

Այդ հասակից դէնը մարդուս քաշը եթէ աւելանում էլ է, այդ աւելցուկը ճարպերի հաւաքուելուց է առաջ գալի: Յետոյ Ֆլուրան հասունութեան հասակը հասցնում է մինչև 70-րդ տարին. դրա պատճառն էլ այն է, որ մարմնի բոլոր մասները 40—45 տարին, վերջնականապէս ամրապնդուելով, մնում են անփոփոխ մինչև 70 տարեկան հասակը:

Վերջապէս ծերութեան նշանը Ֆլուրան համարում է այն, որ 70 տարուց դէնը մարդու մարմինն սկսում է արդէն իւր ունեցածից ծախսել՝ զրկուած լինելով աւելցուկ ոյժ խնայելու կարողութիւնից:

Մարդուս կեանքի երկարութեան մասին խօսք ընկնելիս —ասում է Դօհել— առհասարակ Մաթուսաղայի տարիներն են մատնանիշ անում. ասում են Մաթուսաղան 969 տարի ապրեց:

Այդ թիւը մեր ժամանակի հաշուով ճիշտ բան չի կարելի ընդունել, որովհետև յայտնի չէ թէ մեզանից այդքան հեռու ժամանակ տարին ինչպէս էին հաշւում. այնպէս, ինչպէս մենք, թէ՝ ուրիշ կերպ: Գիտնականներից մի քանիսն ասում են որ մինչև Աբրահամ երեք ամիսը մի տարի էր հաշւում. այդ նահապետի մահից յետ միայն սկսեցին 8 ամիսը մի տարի հաշուել. և միայն Յովսէփից յետոյ, որ Եգիպտոսի Փարաւոններից մէկի առաջին պաշտօնեան էր, տարին սկսեցին 12 ամսից հաշուել: Հիմա հարց՝ չէ՞ին ընդունում այդ ժամանակ իւրաքանչիւր ամիսը կամ հենց չորս եղանակներից իւրաքանչիւրը մի-մի տարի: Հնեաբանների պնդելով, ասում է



Դօհել—վերջին ենթադրութիւնը պէտք է որ հաւանական լինի. այսինքն՝ տարուայ եղանակներից իւրաքանչիւրը մի-մի տարի պէտք է հաշուելիս լինէին: Այդ հաշուով դուրս կգայ արդէն, որ Մաթուսաղ'ան 242 տարեկան հասակումն է վախճանուել: Հնեաբանների ենթադրութիւնն աւելի հաւանական է այն կէտից, որ նահապետներն ամուսնանում էին 60,70, մինչև անգամ 100 տարեկան հասակում, որ նոյն Հնեաբանների արած հաշուով համապատասխանում է մեր 15,20 տարեկան հասակին. իսկ եթէ թոյլ տանք, որ այդ ժամանակ իւրաքանչիւր ամիս մի-մի տարի էին հաշւում, Մաթուսաղ'այի տարիներն աւելի կ'պակասին՝ դուրս կըգայ մեր հաշուով, որ նա վախճանուել է 81 տարեկան հասակում, որին մեր ժամանակն էլ են հասնում շատերը:

Հիմնուելով մկրտութեան, ամուսնութեան և մահացուցակների վրայ՝ կարելի է մի բան ասել մարդուս կեանքի սահմանի մասին. այն՝ որ 100 տարուց անցնելով շատ քչերն են հասնում 150—200 տարուն.

Օգտուելով պաշտօնական աղբիւրներից, իբրև եզրակացութեան օրինակ, մէջ են բերում առհասարակ Անգլիացի Թովմաս Պարրէին, որ 9 թագաւորի երես տեսաւ և 103 տարեկան հասակում այնքան առոյգ էր որ, կալ էր կասում:

120 տարեկան հասակում երկրորդ անգամ ամուսնացաւ և 152 տարեկան հասակում Կարլոս II-ի հրամանով Լոնդոն բերին նրան: Թագաւորը հրամայեց փառաւոր ճաշով պատուել, բայց այդ ճաշը շատ թանգ նստեց ծերունուն —միւս օրը մեռաւ: Հռչակաւոր անդամատ-բնաբան Հերվէյը վկայեց, որ Պարրէն մեռել է ստամոքսի կերակուրը չմարսելուց և թէ՝ հանգուցեալի բոլոր գործարաններն այնպէս լաւ դրութեան մէջ են եղել, որ կարող էր դեռ շատ ապրել: Պարրէյից աւելի երկար ապրեց Նորլանդիայում՝ Կենտինգէր, որ վախճանուել է 185 տարեկան հասակում: Երկարա-

կեցութեան կողմից աչքի են ընկնում ոչ միայն առանձին անհատներ, այլև ազգեր, որոնց մէջ յայտնի է եփրայական ազգը:

## VI.

Չնայելով շատ քչերն են 100 կամ աւելի տարի ապրում, բայց և այնպէս քանի մի դիտողութիւնների հիման վրայ կարելի է ենթադրել, թէ երկարակեցութիւնը պիտի որ ամենքի համար հնարաւոր լինէր: Մի քանի գիտնականներ—Միլլեր, Բէր, Վէյսման, Բիւգլի, Մեբիուս, Խլօպկովսկի և ուրիշներ—մինչև անգամ, ասում է Դօհէլ, այն կարծիքի են՝ թէ բնական մահ չէր լինիլ, եթէ մարդն էլ ամեօբների նման պահած լինէր վերանորոգման ընդունակութիւնը, այսինքն՝ մարդուս մարմնի բաղադրական մասերը—մկանունքները, նեարդերը, ոսկորները և նոյն իսկ արիւնը կարողանային միշտ նորոգուիլ՝ ձեռք բերելով առաջուայ ոյժը, կենսական զօրութիւնը:

Սակայն այդ ընդունակութիւնը մարդու հետ միասին և ուրիշ բարձր զարգացութեան հասած կենդանիներ վաղուց է, որ կորցրել են, այդ պատճառով էլ չեն կարող ամեօբների նման մշտակեաց լինիլ, ինչպէս կարծում է գերմանացի Վէյսման գիտնականը: Այժմ գլխաւոր խնդիրը այն չէ թէ մարդս մահկանացու է, այլ այն, թէ ինչպէս անել, որ բոլորն էլ միակերպ կարողանային հասնել խորին ծերութեան, պատճառ՝ վիճակագրական անժխտելի տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ մարդկութեան մեծամասնութիւնը, ոչ միայն խոր ծերութեան չի կարողանում հասնել, այլ նոյն իսկ Ֆլուրանի որոշած հասունութեան հասակին էլ շատ քչերն են անցկացնում: Այսպէս՝ Օլդենդորֆի տուած տեղեկութիւններից երևում է, որ Պրուսիայում 100,000 արու ծնուածներից մի տարուց յետ մնացել է միայն 77,145 հոգի. 10 տարուց յետ 62,304. 20 տարուց յետ—59,215. 30-ից յետ—54,077. 40-ից յետ—



48,186. 50 տարուց յետ—40,356. 60-ից յետ—30,187 հոգի. 70 տար. յետ—17,137 հոգի. 80-ից յետ—4,486. 90 տարուց յետ—349 հոգի և վերջապէս, 100 տարուց յետ—15 հոգի: Ասել է թէ 100,000 ծնուածից միայն 15 հոգի է 100 տարեկան ծերունի դառնում:

Հետաքրքիր է և այն փաստը, որ մահացութեան տոկոսը զանազան երկրներում զանազան է. այսպէս Շվեդ-Նորվեգիայում 1000 հոգուց մի տարուայ մէջ մեռնում է 29 հոգի:

Զուիցերիայում և Ֆրանսիայում 24 հոգի
Գերմանիայում . . . . . 27 »
Աւստրիայում. . . . . . 32 »
Իսկ Ռուսիայում . . . . 36-ից էլ մի քան աւել

Ի՞նչ են ապացուցանում այս վիճակագրական տեղեկութիւնները: Վաղաժամ մեռնելու պատճառն երկու է, ասում է Դօհէլ. մինը—ներքին, միւսն—արտաքին: Ներքին պատճառը կախուած է կազմուածքի բնածին յատկութիւնից, նրա ամրութիւնից, արտաքինն՝ արտաքին պատահարներից: Ինչպէս կաղնին ամուր նիւթից լինելով աւելի երկար է դիմանում բնութեան հարուածներին, քանթէ ածարին, որ աւելի թոյլ նիւթից լինելով՝ շուտ քայքայւում՝ այդպէս էլ մարդիկ են լինում ծնուելիս: Մինն ամուր կազմուածքով է ծնւում, միւսը՝ թոյլ. և եթէ երկու տարբեր ամրութեան կազմուածքի տէր անհատներին դնելու լինէինք միակերպ վատ պայմանների մէջ՝ ինչ ասել կուզի որ, նրանցից շատ դիմացողը նա դուրս կըգար, ով աւելի ամուր կազմուածք ունի, ինչպէս էլ լինում է իսկապէս:

## VII.

Ի՞նչ արտաքին պայմաններ են, սակայն, որ չեն թողնում խորին ծերութեան հասնել:

Սենեքա փիլիսոփան ասել է. «կեանքը երկար է. մե՛նք

ենք կարճացնում»: Նրանից շատ յետոյ անգլիացի փիլիսոփայ Բէկոնն ասեց. «երիտասարդ հասակի շուայտութեամբ անցկացնելը մի տեսակ դաւ է ծերութեան հասակի դէմ:»—Գօհել իւր կողմից այսպէս է ասում. «ո՛չ մի բժիշկ իւր բոլոր գիտութիւնով և դեղերի բոլոր պաշարով, ոչինչ առողջապահական միջոցներ գիւղացիների և քաղաքացիների մէջ չեն կարող մահացութեան տոկոսը նուազեցնել, քանի որ տիրապետում է գլխովին աղքատութիւն, քանի որ ժողովուրդը, զուրկ գիտակցութիւնից, իւր գլուխն արբեցութեան է տալի՛ թաղուելով կեանքի հազար ու մի կեղտոտութիւնների մէջ, քանի որ կորուած է նրա սէրն աշխատանքից...» Մինչև Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնն, ասում է նա, Ֆրանսիայում բնակիչների կեանքի միջին երկարակեցութիւնը $28^{3}/_{4}$ տարի էր, յեղափոխութիւնից յետ 8 տարով աւելացաւ՝ 36,4 տարի դարձաւ, հենց որ մտաւ ծաղկի պատուաստումը, կեանքի նիւթական բարօրութիւնը և ուրիշ առողջապահական միջոցներ:

Այս նշանաւոր պատմական փաստը ցոյց է տալիս որ արտաքին քայքայիչ պատահարների դէմ կարելի է կռուելով լաւ հետևանքների հասնել: Այս տեղ արդէն Գօհել վերջացնում է իւր ընդհանուր և գլխաւոր մտքերը. այնուհետև ա՛յն տեսակ երևոյթներ է մէջ բերում, որոնք աւելի ռուս հասարակ ժողովրդի կեանքին են յատուկ:

Աղքատութիւնն անշուշտ մարդուս կեանքի սարսափելի թշնամիներից մինն է: Ո՛չ մի փիլիսոփայ, ո՛չ մի տնտեսագէտ, ո՛չ մի պատմաբան չի քաջալերում աղքատութիւնը. մինչև անգամ ամերիկական մի առած, որքան յիշում եմ, ասում է. «աղքատութիւնն ամեն չարեաց աղբիւր է»: Հեռու չգնանք՝ անցեալ տարուայ խօլերան աւելի աղքատներին էր զրկում: Հարստութիւնը միջոց է տալիս գիտութեան պատուէրները կատարելու: Ենթադրենք գիտութիւնը գտել է, որ Թիֆլի-



սում ամառը մնացողը խօլերային զոհ է գնալու, ինչ կարող է անել աղքատը, մինչդեռ հարուստը կարող է քաշուել այնտեղ, ուր սիրտը կուզի:

Սակայն գիտութեան պատուէրները ճշտիւ և մաքրով կատարելու համար հասկացողութեան հետ և կամքի յայտնի ամրութիւն է հարկաւոր,—միայն հարստութիւնը բաւական չէ: Վաղուց է, որ գիտութիւնը քարոզում է, թէ ծխելը թոյն է, ով է լսում նրա ձայնը: Գիտութիւնն ասում է իւր ասելիքը կանոնաւոր ֆիզիքական և մտաւոր աշխատութեան այլ և հանգստութեան ժամերի մասին,—ով է կատարում նրա խորհուրդները: Գիտութիւնը շատ բան է ասում և շատ էլ ասել է, հասկացող, լսող ու կատարողն է պակաս:

## VIII.

Կեանքի չարաւութեան մասին խօսողներից յայտնի է Ֆրանսիացի նշանաւոր բժիշկ Դեբէ իր «ամուսնութեան նշանակութիւնը» խորագրով բազմերես գրքով, որի մէջ անգին տեղեկութիւններ է տալիս նա: Այդ գիրքն առաջին անգամ լոյս տեսնելիս Պարիզում շատերին խրտնեցրեց, որովհետև այնտեղ այնպիսի ծածուկ մեղքերի մասին է խօսում, որոնց մասին մարդիկ իրար հետ ցերեկով չեն խօսում, այն ինչ մութ տեղերում սիրում են անձնատուր լինել նրանց: Դեբէյի նշանաւոր գիրքը ռուսերէն «Значеніе брака» վերնագիրն է կրում: Նա այնքան անհրաժեշտ տեղեկութիւններ է տալիս, որ զարմանալի պիտի թուի նրա չկարդալը:—Կարդալով խորին ուշադրութեամբ Դեբէյի այդ հեղինակութիւնը, դառն կերպով ափսոսում է մարդ՝ թէ ինչու առաջին անգամ աշխարհիս խերըն ու շառը ճանաչելիս չ'ընկաւ ձեռը կարդալու—այնքան հետաքրքիր է:

«Ամուսնութեան նշանակութիւնը» կարդալուց ա՛յն համոզմունքն ես դուրս բերում, որ մարդիկ իրանց կեանքն իրանց ձեռքով են կարճեցնում, չ'իմանալով սիրոյ չափաւոր վարուելը....

Ոչինչ բան այնքան չէ կրծում մարդու կազմուածքը, որքան՝ անհաշիւ սիրոյ հուրը... Որեմն՝ կեանքի երկրորդ ամենազօրեղ թշնամիներից մինն էլ պիտի անշուշտ ա՛յն անհաշիւ րոպէները համարել, որ անց է կացնում մարդ մթին խոր-

շերում. այնտեղ՝ ուր կուսութիւնը զոհ է գնում փողահաս կրքերին, այնտեղ՝ ուր մարդը կենդանի է դառնում...

Մի ժողովրդի բարօրութեան մասին խօսելիս զանց չպիտի անել նրա անդամների առողջութիւնը. առողջութիւն, որ աղբիւր է խաղաղ և ուրախ կեանքի ու՝ հիմնաքար մարդուս երջանկութեան։ Ինչ օգուտ թոքախտին, եթէ ամբողջ աշխարհն էլ նրան ընծայես։ Ի՞նչ կարող է փոխարինել վարդագոյն այտերին, ամուր ծնկներին, խրոխտ կրծքին։

Սակայն՝ երկար կեանքն այն ժամանակ խորհուրդ ունի, երբ մարդ ապրում է նաև իւր մերձաւորի սրտով. երբ ցաւակցութեամբ սրբում է նա իւր հարևանի արտասուաց կաթիլները։ Ապրել ճշմարտութեան սիրով. ապրել անշահամոլ ձգտումներով. ապրել իւր նմանին սիրելու համար, լաւ այնտեղ, ուր սեփական շահերը զոհ են գնում ընդհանուրին —ահա՛ մեր կարծիքով, կեանքի մերձաւոր նպատակը։





† 19 դեկտեմբերի 1892 թ.



# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ

## ՆԻԿՈՂԱՅՈՍ ԲՈԶԱՐՋԵԱՆՑԻ

ԹԻՖԼԻԶՈՒՄ

Գոյութիւն ունի 1858 թուից։

Յարգելի հասարակութեան ուշադրութիւնն եմ հրաւիրում իմ գործարանում պատրաստած առանց օսլայի (կրախմալ) պապիրոսների վրայ, որոնք պատրաստւում են յատկապէս յարմարացրած մեքենաներով շատ մաքուր։ Այդ կերպով պատրաստած պապիրոսները գործածելով պ.պ. ծխողները ազատ են մնում օսլայի անախորժ համից և անմաքրութիւնից։

Դարձեալ ստացել եմ տաճկական ամենաընտիր հոտաւէտ ծխախոտներ և պատրաստւում են շատ չափաւոր գներով, իւրաքանչիւր ծխողի ճաշակին համեմատ։

Պատուէրները ընդունւում են Դվորցովայա փողոցում, № 1 խանութում։

---

Золотая медаль. Тифлисъ 1889 г. | Двѣ серебряныя медали Парижъ 1889 г. | Золотая медаль. Казань 1890 г.

# ЗАВОДЫ

# Д. З. САРАДЖЕВА

## ВЪ ТИФЛИСѢ.

Ректификованное столовое вино, виноградная водка, коньякъ разныхъ сортовъ, оригинальные ликеры, наливки и проч.

Розничная продажа въ собственныхъ магазинахъ:

1) Дворцовая, собственный домъ.
2) Противъ памятника Воронцову.

***Примѣчаніе.*** Въ виду частыхъ поддѣлокъ этикетовъ, контора проситъ г.г. потребителей обратить вниманіе на марку завода: „Туръ на скалѣ“.




ТОРГОВЫЙ ДОМЪ

# Бр. А. и Я. АЛЬШВАНГЪ

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՎԱՃԱՌԱՏԱՆ — ՃԻՒՂ, ԹԻՖԼԻԶՈՒՄ.

## ԵՂԲ. Ա. ԵՒ ԵԱ. ԱՅԼՇՎԱՆԳ

Դվորցովօյի փողոցի անկիւնում Երեւանեան հրապարակի դէմ-մաց Լալայեանի տանը, և Գոլովինսկի պրօսպեկտի վերայ Մդիվա-նու տանը։ Պալատնօ, սեղանի և անկողնի սպիտակեղէն, արտա-սահմանի և Ռուսաստանի գործարանների Թելէ գործուածք-ներ, տղամարդկերանց կանանց և երեխաների համար սպիտա-կեղէն. ամբողջ բաժինքի պատրաստութիւն և սեփական գոր-ծարանի փողպատներ։

---

РЕКТИФИКОВАННОЕ

ХЛѢБНОЕ СТОЛОВОЕ ВИНО

ЗАВОДОВЪ

## Бр. СОГОМОНОВЫХЪ

ВЪ ТИФЛИСѢ.

Продается во всѣхъ извѣстныхъ тифлисскихъ магазинахъ.

Заказы принимаются въ конторѣ заводовъ по Николаевской площади, собств. домъ, № 13.

---

МАГАЗИНЪ и СКЛАДЪ МАСЛЯНЫХЪ КРАСОКЪ

## АРТЕМІЯ ЕГ. ГЕВАНДОВА

*на Михайловской улицѣ, домъ № 24, въ Тифлисѣ.*

**Продажа иностранныхъ и русскихъ красокъ всѣхъ цвѣтовъ, сухихъ и тертыхъ для постройки зданiи и художниковъ.**

2010

# ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) *Քաղքի ադաթ (մի մասը միայն) տպ.* 1869 *թ.* 5 *կ.*
2) *«Ծոցի» օրացոյց* 1888 *թ.* . . . . . . . 5 »
3) — — 1889 » . . . . . . . 5 »
4) — — 1890 » . . . . . . . 5 »
5) — — 1891 » . . . . . . . 5 »
6) — — 1892 » . . . . . . . 10 »
7) — — 1893 » . . . . . . . 15 »
8) — — 1894 » . . . . . . . 15 »
9) *Պատկերազարդ* 1889 » . . . . . . . 20 »
10) — — 1891 » . . . . . . . 20 »
11) — — 1892 » . . . . . . . 20 »
12) — — 1893 » . . . . . . . 25 »
13) — — 1894 » . . . . . . . 25 »
14) *«Կենդանի թաղուած մեռած կարծեցեալների մասին»* . . . . . . . . . . . . . 3 »
15) *«Աստղալից երկինքը և երկրագունդը».* . . . 5 »

*Վաճառւում է Մ. Չմշկեանի և Թիֆլիսի յայտնի գրավաճառանոցներում, նոյնպէս բոլոր թղթեղէնների խանութներում։ Մեծ քանակութեամբ գնողները աւելի զիջում ստանալու համար դիմում են հետևեալ հասցէով--* **Тифлисъ, Макару Чимишкянцу.**

## ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

1) *«Սահակ Պարթև» (կենսագրութիւն)։*
2) *«Ժողովրդական հնարքներ և դարմաններ»։*
3) *«Քրիստոնէի արիւնը հրեաք գործ են ածում թէ ոչ»։*
4) *«Ազատութեան կրակը կամ Ս. Կարապետի ուխտը»։*

**ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.**

0022432
0022431
0022430
0022429
0022428
0022427
0022411
0022410
0022409

2007

2013

5318-5326

NL0022428
NL0022432
NL0022427
NL0022431
NL0022411
NL0022430
NL0022410
NL0022429
NL0022409